

Հորիզոն

2021 | ԴԵԿՏԵՄԲԵՐ | DECEMBER | DÉCEMBRE
PUBLICATION-HORIZON-CONTRACT NO 40065294

horizon





ADONIS



NOS MAGASINS

2001 Sauvé O,
Montréal, QC H4N 3L6
(514) 382-8606

4601 boul.Des Sources,
Montréal, QC H8Y 3C5
(514) 685-5050

8880 boul. Leduc,
Brossard, QC J4Y 0G4
(450) 656-9595

2425 boul.Curé Labelle,
Laval, QC H7V 1R3
(450) 978-2333

225 Rue Peel,
Montréal, QC H3C 2G6
(514) 905-6499

2173 Ste-Catherine O,
Montréal, QC H3H 1M9
(514) 933-4747

3100 boul. Thimens,
Montréal, QC H4R 0C9
(450) 904-6789

2655 Ave. Des Aristocrates,
Laval, QC H7E 0H3
(450) 665-8801

7250 boul.Des Roseaies,
Anjou, QC H1M 2T5
(514) 493-6667

1240 Ave Eglinton O,
Mississauga, ON L5V 1N3
(905) 363-0707

1055 St-Laurent boul,
Ottawa, ON K1K 3B1
(613) 778-8883

920 boul.Maloney O,
Gatineau, QC J8T 3R6
(819) 317-1737

Suivez-nous !



www.groupeadonis.ca

20 Ashtonbee. Road,
Scarborough, ON M1L 4R5
(416) 642-1515

2561 Stanfield Rd,
Mississauga, ON L4Y 1R6
(365) 207-0200

1700 Rue Bouvier
Québec, QC G2K 1N8
(581) 890-9994



Scan here to see
our weekly flyer!



Al Nejmah

FINE FOODS INC.

Supermarket | Restaurant
Bakery | Halal Butcher

3085 Hurontario St. | Unit 1-6 |
Mississauga | ON L5A 4E4

Phone: +1(289) 232 1200
WWW.ALNEJMAHFOODS.COM



ALNEJMAH



ALNEJMAH



RE/MAX

West Realty Inc.

Anto Keledjian

ԱՆԴՐԱՆԻԿ
ԳԸԼԸՃԵԱՆ

Sales representative



Anything Less
is second best

Direct:

416-930-2686
A N T O

Congratulations to my clients that bought
PRE-CONSTRUCTION PROJECTS
that are now ripping the benefits.
If you want to know how to profit in
pre-construction real estate, please contact me.

Commercial / Residential
International sales .
Investments Dubai - CostaRica - Panama

Power of sales .
Estate sales . Plazas & more

www.torontosold.ca
antok13@gmail.com





2021 Mazda CX-30 and 2021 Mazda CX-5 shown

FOR FURTHER INQUIRIES CONTACT

KEVORK ASADOURIAN
GENERAL MANAGER

kevork@gabriel.ca
514 328-7777

MAZDA
GABRIEL
ANJOU

Mazda Gabriel Anjou
7050, boul. Henri-Bourassa Est
Anjou H1E 7K7
514 328-7777
mazdagabrielanjou.com

MAZDA
GABRIEL
ST-LAURENT

Mazda Gabriel St-Laurent
5850, chemin de la Côte-de-Liesse,
Montréal H4T 1B2
514 256-7777
mazdagabrielstlaurent.com

MAZDA
GABRIEL
ST-JACQUES

Mazda Gabriel St-Jacques
5333, rue Saint-Jacques
Montréal H4A 2C9
514 484-7777
mazdagabrielstjacques.com

MAZDA
GABRIEL
PLATEAU

Mazda Gabriel Plateau
4777, rue D'Iberville,
Montréal H2H 2L9
514 254-7777
mazdagabrielplateau.com

*Contact Mazda Gabriel dealerships for more details.



hearing aid source

hearing instrument specialists

HEAR CHARGE CONNECT

HEAR speech better in any environment
with new Augmented Focus technology

CHARGE your hearing aids – Never
change a tiny hearing aid battery again!

CONNECT your hearing aids to your
Android or iPhone smartphone.



hearing aid source
hearing instrument specialists



**TRY HEARING AIDS
RISK-FREE**

Call 416 754-4327

2 LOCATIONS

702 Coxwell Avenue
#704, Toronto, ON M4C 3B9
Tel: 416 463-4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Road,
#29 Toronto, ON, M1R 4B9
Tel: 416 754-4327 (HEAR)

hello@hearingaidsource.ca



- Free Hearing Tests
- No obligation Hearing Aid Trial
- Hearing Protection

www.hearingaidsource.ca



BARRY

KAREN

ALEX

GARO

KAZANDJIAN



**METTRE NOS CLIENTS EN PREMIER
NOUS CLASSE AUSSI PARMIS LES PREMIERS**

EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

RÉ/SULTATS

\$14 333-3000

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | FRANCHISÉ INDÉPENDANT ET AUTONOME DE RE/MAX QUÉBEC



BERANI

BAYVIEW VILLAGE

2901 Bayview Ave Toronto, ON M2K 1E6

info@berani.ca



Մեր Խօսքը

«Հորիզոն»-ի 21-րդ բացառիկի կողքի նկարը կը ներկայացնէ Շուշիի Ս. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին՝ լոյսերով պարուրուած: Ամանորի այս յատուկ թիւին մէջ առաջնորդող յօդուածով քննարկման ենթարկուած է Սփիւռքահայութեան վերապահուած դերակատարութիւնը յետ-պատերազմական հանգրուանին՝ յատկապէս ներազգային բնագաւառէն ներս:

Արցախի Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան պորտակապը հանդիսացող Քաջաթաղի Աղաւնոյ գիւղը այսօր իր բնակչութեան անտեղիտալի կամքին շնորհիւ վերածուած է Արցախի դիմադրութեան նորօրեայ Սպարտային: Գիւղի համայնքապետին ու սահմանային բնակավայրին մասին անդրադարձը լայնօրէն կ'անդրադառնայ Արցախի այսօրուան իրավիճակին:

Հայաստանի քաղաքական կեանքին մէջ այսօրուան ընդգիծութեան դերակատարութեան մասին յօդուածը կ'անդրադառնայ ներքաղաքական իրադրութեան, արտա-

քին սպառնալիքներու եւ անձնատուողական վարքագծով վարչակարգի կործանաբեր ընթացքին մասին:

Վերլուծողական յօդուածով լոյս կը սփռուի Հարաւային Կովկասի տարածաշրջանային քաղաքականութեան մէջ Իրանի վերապահուած դերակատարութեան մասին:

Յատուկ հարցազրոյցով լոյս կը սփռուի Գանատայի համայնքային կեանքին մէջ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գործունէութեան եւ յատկապէս Արցախեան պատերազմէն ետք Գանատայի Հայ Դատի յանձնախումբի աշխատանքներուն վրայ:

Անգլերէն եւ Ֆրանսերէն հատուածները կ'անդրադառնան Արցախի հետագայ քաղաքական կարգավիճակին եւ Արցախի մէջ ՀՅԴ երիտասարդական կազմակերպութիւններու կողմէ կազմակերպուած օժանդակութիւններուն մասին:

«Հորիզոն»

Բովանդակութիւն

ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԵՐՊՈՒՄ ԹԷ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆ. Սփիւռքեան մօտեցում, էջ 10
Խ. Տէր Ղուկասեան

Սա Մեր Հողն է Որ Չափուած է Պայքարող Տղաներու Արեամբ. Անդրանիկ Չաւուշեան, էջ 22
Նայիրի Մկրտիչեան

Ընդդիմութեան եւ Դիմադրութեան Զոյգ Մարտահրաւերներու Գիտակցութեամբ, էջ 29
Կարօ Արմէնեան

Իրանեան Գործօնն Ու «Ջանգեզուրի Միջանցք»-ը, էջ 32
Վահրամ Էմմիլեան

Հարցազրոյց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գանատայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Մհեր Գարաբաշեանի հետ, էջ 38

Ապրիլ յոյսով, յոյսով ապրիլ, էջ 42
Վրէժ-Արմէն

Ինչպէ՞ս զօրացնել մեր մարմինն դիմադրողականութիւնը՝ պաշտպանուելու համար հիւանդութիւններու, յատկապէս covid 19-ի դէմ, էջ 46
Շաղիկ Գաբրիէլեան

What kind of Artsakh do we want?, Page 54
Yeghia Tashjian

Projet Achagerd:venir en aide aux enfants d'Artsakh et d'Arménie, page 58
Par Varénag Cazarian

(Կողքի նկարը Վլատիմիր Գեորգեանի)

Այս էջը կը հովանաւորէ Melbourne-ի «Դոյանար»-ի Չայնը



Crown Pastries
حلويات التاج

Fine Middle Eastern Pastries



TASTE OF ROYALTY

CROWNPASTRIES.CA



Scarborough: 2086 Lawrence Ave E, Ontario / (647) 351-2015

Mississauga: 5083 Dixie Rd unit D3, Ontario / (905) 602-2018

Oakville: 407 Iroquois Shore Rd, Ontario / (905) 339-2021

AUTOMOBILES INTER-LUX INC.



Centre de collision approuvé
Approved Collision Centre

FRANCK ALTAN
PRÉSIDENT

MIKE BACHEKJIAN
DIRECTEUR DE CARROSSERIE

Mercedes-Benz



Centre de Collision Certifié Mercedes-Benz de Laval

2025 rue Monterey, Laval PQ H7L 3T6

Téléphone: 450-686-8866 | info@interlux.ca | collisionmblaval@interlux.ca | www.inter-lux.ca

ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԵՐՊՈՒՄ

ԹԷ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆ

Սփիւռքեան մօտեցում

Քառասունչորսօրեայ Պատերազմի աղիտալի պարտութիւնը, որուն տարողութիւնը շատ քիչերը կրնային կռահել Արծրունեան «Յաղթելու ենք»-ին եւ Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւններուն տուած հաւաստիացումներուն վստահած Սփիւռքին մէջ, չոքային ազդեցութիւն ունեցաւ նաեւ աշխարհով մէկ ինքնաբերական զօրաշարժի ենթարկուած Հայութեան վրայ: Նոյեմբեր 9, 2020-ի նուաստացուցիչ եռակողմ յայտարարութեամբ հաստատուած հրադադարէն տարի մը անցաւ, բայց Սփիւռքը տակաւին չի գիտեր ինչպէս հակազդել, ինչպէս դուրս գալ չոքային իրավիճակէն, ինչպէս վերադառնի զօրաշարժի իր կարողութիւնը:

2021-ին, զարմանքով, անձկութեամբ, ընդվզումով, բայց մանաւանդ անկարող որեւէ քայլի, Սփիւռքը ականատես եղաւ Հայրենի ներքաղաքական ոլորտի բեւեռացման սրումին ու միջազգային բեմին վրայ Հայկական դիւանագիտութեան ինքնազէջողացման, եթէ ոչ պարզ ու մէկին՝ կամաւոր բացակայութեան: Տեսաւ թէ ինչպէս պատերազմէն անմիջապէս յետոյ, իշխանութիւնը պահելու թէ իշխանութիւնները տուել զրկելու կառավարութեան եւ արտախորհրդարանային ընդդիմութեան բախումի մագլցումն ու փոխադարձ անզիջողութիւնը անկարելի դարձուցին ներազգային կենսական համաձայնութիւն մը, այրեցին փոխ-հասկացողութեան ամէն կամուրջ, եւ ի թերեւ հանցին այս ամենաճակատագրական պահուն համար այնքան անհրաժեշտ ազգային միասնականութեան ամէն յոյս: Հակապատկերը այն ինչին Սփիւռքը վկայ եղաւ աւելի քամ երեսուն տարի առաջ Ղարաբաղեան Շարժումով եւ անկախութեան գործընթացով:

Դժուար է, անշուշտ, առանց համապատասխան հարցախոյզի եւ ուսումնասիրութեան հաստատել, թէ Սփիւռքը Հայրենի քաղաքական դասէն, իշխանութիւն թէ ընդդիմութիւն, կը սպասէր նման խոհեմութեան նշան մը որպէսզի վերականգնէր, եւ, ինչպէս 1988-ին, հակառակ ամէն դժուարութիւններուն հաւատարմ պայքարին ու յաղթանակին: Բայց այժմ էր հաւաքական յիշողութեան մէջ այն եղելութիւն/պատկերը որով եւ լինելութեան նոր հեռանկարներ կը բացուէին, հոգ չէ չափ աւելի երեւակայական/հոետորական քան իրական/գործնական: Հայ ըլլալու ճշմարտութիւն մը կար, որ Յեղասպանութենէն յետոյ աշխարհացրիւ Հայութեան ինքնութեան պահպանման վրայ դրուած զրաւը կ'իմաստաւորէր: Արդ, Քառասունչորսօրեայ Պատերազմէն եւ նուաստացուցիչ պարտութենէն յետոյ ինչպէ՞ս մտածել այդ ճշմարտութեան մասին, ինչպէ՞ս կասեցնել անոր իմաստաթափումը որուն կենդանի պատկերը պատերազմէն մէկ տարի անց տակաւին համեցող չոքային այս իրավիճակն է:

Խորքին մէջ, պատերազմը եւ պարտութիւնը առանձին չեն բացատրեր Սփիւռքի այս անդամալուծումը: Պարզապէս արագացուցին բացայայտումը այն լուսանցքային («մարզինալ») տեղին որ Սփիւռքին վերապահուեցաւ անկախութենէն

յետոյ Հայրենի քաղաքական թէ տնտեսական զարգացման որոշումներու կայացման հոլովոյթին մէջ: Անցնող երեսուն տարիներուն փաստօրէն չկար, չեղաւ, Սփիւռքի օրակարգ, կար միայն Հայաստան-Սփիւռք օրակարգ: Հետեւանք էր Հայրենի քաղաքական ընտրանիի չկամութեան Սփիւռքը ձայնով եւ քուէի իրաւունքով ներառելու որոշման կայացման պետական համակարգին մէջ: Բայց նաեւ բարացուցական է Սփիւռքի ձախողութեան՝ ունենալու իր ինքնուրոյն օրակարգը, ի՛ր մօտեցումը, թէկուզ եւ առաջնահերթութիւն տալով Հայրենիքի հետ յարաբերութիւններուն: Պատերազմէն յետոյ ընկերային ցանցերու վրայ քննարկումներուն ընթացքին Սփիւռքին ուղղուած քաղաքավար, հեղեղական թէ բացայայտ նկատողութիւնները, որոնց միտք ի բանին այն է, որ Հայրենիքէն դուրս ապրողը ոչ իսկ բարոյական իրաւունքը ունի Հայրենի իշխանութիւններուն քննադատելու, արտացոլումն է պետական համակարգին մէջ Սփիւռքի վերապահուած լաւագոյն պարագային լուսանցքային տեղին: Միւս կողմէ, եթէ նկատի առնենք, որ ամբողջ տարի մը անցած է եւ իշխանութիւնները տակաւին հաշուետուութիւն չեն ներկայացուցած Հայաստան Հիմնադրամի հանգանակած գումարներուն իւրացման, հարկը միլիոն տոլարի երբ, ուր եւ ինչպէս ծախսուելու մասին, եւ Սփիւռքը լուռ կը մնայ, թերեւս հասկնանք Սփիւռքի անկարողութիւնը իր լուսանցքային կացութենէն դուրս գալու: Օրինակը խօսուն է այն իմաստով, որ Հիմնադրամը այն կառույցն է, ուր Սփիւռքը պատեհութիւնը ունի թէկուզ եւ շատ սահմանափակ կերպով մասնակից եւ ոչ միայն կամակատար ըլլալու ներ-Հայաստանեան գործընթացին, առնուազն վերահսկողութեան իրաւունքն ունենալու հաւաքումած գումարներու ճիշդ գործածման մասին: Բայց, ահաւասիկ, Հիմնադրամը իր աշխատանքները կը շարունակէ որպէս ոչինչ, եւ ոչ իսկ հանրային բանավէճ սկսած է անոր կառույցի կամ հաշուետուական մեքանիզմի բարեկարգումի անհրաժեշտութեան մասին... Աւելի՛ն, տարեկան առաջ Հիմնադրամի հոգաբարձուներու Նոյեմբերեան հաւաքին, ՀՀ Նախագահ Արմէն Սարգսեան կ'ընդվզէր Հիմնադրամի հանդէպ անվստահութեան արտայայտութիւններուն: Նոյն այդ անձնաւորութիւնը, որ տարի մը առաջ պահանջած էր հաշուետուութիւն, արդէն կը ձայնակցէր վարչապետ Փաշինեանին եւ Սփիւռքի վրայ բարոյական ճնշում բանեցնելու ճամբով բոլոր քննադատական ձայները լուծեան մատնել կ'ուզէր:

Սփիւռքի երեսնամեայ «մարզինալ»ացման նիւթը բնականաբար բարդ է եւ առանձին քննարկման կը կարօտի, եւ այդ քննարկումը այսօրուայ ազգային գոյութենական իրավիճակին մէջ կրնայ լոկ մտամարզանք թուիլ, եւ մինչեւ իսկ կաշկանդել Սփիւռքի դեռեւս անհրաժեշտ մասնակցութիւնը Հայրենիքի վերականգնումին: Այդպէս չէ: «Հիմա ասոր ժամանակը չէ» մօտեցումը ինքնին հարազատ արձա-

Միշտ էջը կը հովանաւորեն Ծափ եւ Զաւիւ Կփօնեան



KOMITAS

SALON FUNÉRAIRE

We recognize that each family is unique

- Family owned since 1997
- For all beliefs
- Completely renovated
- High-end white glove services
- Butler service with memorial service/condolences
- Dedicated facilities/lounges for one family at a time
- Our own fleet of new cars: hearse, limousine, sedan



We are proud to offer *ASSURANT*® coverage,
allowing you to make monthly payments for up to 5 years
at no cost, for your funeral planning

24/7 514-331-0400 www.komitas.ca
5180 rue de Salaberry, Montréal, QC H4J 1J3



Electric innovation.

2022 Audi Q4 e-tron



Starting at \$59,950 MSRP.

The model shown is for illustration purposes only.

>> Bedik Charchafian

>> Vahan Vartanian

General Manager

bcharchafian@gabriel.ca

Certified Vehicles Sales Manager

vahan.vartanian@audiwestisland.ca

Audi
West-Island

4550, boul. Saint-Jean
D.D.O., QC H9H 2A6
514 426-7777
audiwestisland.com



AudiWestIsland

We go out of our way for you!

2021 Audi Canada, Inc. *Model shown with features that may not be available on Canadian models. Contact Audi West-Island for complete details.

գանգն է Սփիւռքին վրայ հոգեբարոյական ուղղակի թէ անուղղակի ճնշումին եւ Սփիւռքի բարդոյթի զգացումին, զորս պիտի՝ անտաճանաչել անցնող երեսուն տարիներու քննական/քննադատան վերատեսութեամբ: Բայց, որպէսզի Սփիւռքեան գոյավիճակի սերտօրէն առնչակից այս քննարկումը ինքզինք չխզէ ազգային գոյութեանական իրավիճակէն եւ սխալ չմեկնաբանուի որպէս հայրենաժխտում, թերեւս լաւ կ'ըլլայ այն սկսիլ հայրենի պետականութեան եւ ժողովուրդին դէմ ծառացած երկու այլընտրանքներուն՝ պարտութեան համակերպում թէ դիմադրութիւն, Սփիւռքեան մօտեցման բանաձեւման փորձով մը:

Թերեւս կրնայ մինչեւ իսկ հակասական թուիլ մէկ կողմէն կարեւորել Սփիւռքեան մտածողութեան ինքնուրոյնութեան անհրաժեշտութիւնը, եւ միւս կողմէ լուսարձակի տակ առնել քաղաքական երկու այլընտրանք, որոնք Հայաստանի մէջ բանաձեւուած են, այն ալ իշխանութիւն/ընդդիմութիւն բաժանման գծի ու քաղաքական պայքարի կտրուածքով: Սփիւռքի ինքնուրոյն մտածողութեան կառուցման նախանձախնդրութիւնը Հայաստանի իշխանութիւններուն թէ ընդդիմութեան այլընտրանք մը հրամցնելու չի վերաբերիր: Կը միտի թէկուզ եւ Հայաստանի մէջ բանաձեւուած այլընտրանքներու բանականացման Սփիւռքեան դիտանկիւնէ, հաստատել Սփիւռքեան իրաւունք՝ այս բանավէճին մէջ հիմակուհիական գոնէ ձայն ունենալու, որքան ալ որ այն հայրենի քաղաքական ընտրանիին համար մնայ բարբառոյ յանապատի...

Աւելցնենք որ Սփիւռքեան դիտարկման ինքնուրոյնութիւնը մէկ կամ միւս այլընտրանքին համաձայն ըլլալու մասին չէ: Այսինքն՝ մարտահրաւէրը այլընտրանքի մը ընտրութիւնը չէ, այլ այլընտրանքներէն որեւէ մէկուն զօրակցութիւնը կամ ակտիւ որդեգրումը հիմաւորել Սփիւռքեան գոյավիճակէն մեկնած: Աւելի՛ն, ընկերային ցանցերու վրայ այս խնդրի քննարկումներուն հետեւողներուն համար քիչ կասկած կայ, որ Սփիւռքը, իր բազմազանութեամբ, բազմաձայնութեան «անձեւ ժխոր»ով եթէ կրնանք ըսել յիշելով Սիմոն Վրացեանի «անձեւ քառս»ը, որով կը բանաձեւէր 1918 Մայիսին անկախութիւն յայտարարած կտոր մը Հայաստանի ներքին կացութիւնը, անմասն չի մնար, չէր կրնար մնալ, այս բանավէճին: Որքանով, սակայն, Սփիւռքէն հնչած ձայնները լոկ արձագանգ են Հայաստանի մէջ զարգացող բանավէճին եւ արդեօք կը յաջողին մէկ կամ միւս այլընտրանքին տալ Սփիւռքեան մօտեցում: Իսկ ի՞նչ կը նշանակէ «Սփիւռքեան մօտեցում»...

«Սփիւռքեան մօտեցում» բանաձեւումին մտաւորական հասկացողութեան համար անհրաժեշտ է գուգահեռներ գծել 1921-ի ազգային իրավիճակին հետ: Ամէն տարբերութիւն յարգելով հանդերձ պատմական երկու ժամանակներու միջեւ, Կարսի ու Մոսկուայի համաձայնագրերը այն ժամանակ յանգեցան անկախութեան կորուստին եւ Հայաստանի խորհրդայնացման, որ, կարեւոր է ի մտի ունենալ, ողջունուեցաւ հայութեան մէկ հատուածին կողմէ: Այսօր անկախ պետականութիւնը վերացման անմիջական վտանգ չի դիմադրաւ, բայց կարելի չէ ժխտել որ անկախութեան մայրամուտ է, որը, այնուամենայնիւ, որպէս աշխարհի չընկալուելի հայութեան մէկ հատուածին կողմէ: Նոյնպէս, դժուար է այն ժամանակ կայացած Սփիւռքի մը մասին խօսիլ, յղացքն իսկ իր այսօրուայ հնչեղութեամբ շրջաքայլութեան չէր դրուած եւ պիտի սկսէր 1930-ականներուն մամլոյ օրգաններու մէջ:



Այնուամենայնիւ, հարկը տարի առաջ կար աշխարհացրիւ հայութիւն ի դէմս արդէն կազմակերպ համայնքներու եւ իրենց հայրենիքէն դուրս ապաստան փնտռող Ցեղասպանութենէն վերապրածներու: 1921թուականը ինչ որ իմաստով, ուրեմն, զէքօ կէտ մըն էր այն ժամանակ աշխարհացրիւ հայութեան համար, եւ մէկ դար անց թերեւս նոյնն է պարագան արդէն կայացած Սփիւռքին, Սփիւռքեան գոյավիճակին, համար:

Մոսկուայի եւ Կարսի պայմանագրերէն հարկը տարի յետոյ, Կովկասեան տարածաշրջանի մէջ ռուս-թրքական մեծապետական շահերու համընկնումը կրնայ յանգիլ պատմութեան կրկնումին: Աւելի՛ն, այդ մէկը ազդարարուեցաւ դեռեւս Քառասունչորսօրեայ Պատերազմին, երբ անոր սկիզբի, ընթացքի եւ աւարտի տարբեր թուականները, յայտարարութիւններն ու որոշումները դիտորդներուն համար բացայայտեցին պատմութեան կրկնումի իրականացման յստակ մտադրութիւն եւ քաղաքական որոշում, առնուազն թուրք-ազրպէյճանական կողմին մօտ: Կովկասի մէջ իր միակ դաշնակիցին նուաստացուցիչ պարտութիւնը հեռուէն դիտող եւ բարձրագոյն պետական պաշտօնեաներու բերնով Հայաստանի քաղաքական ղեկավարութեան ուղղուած վստահաբար ոչ անդիտաւորեալ նկատողութիւններով, Մոսկուա իր կարգին պատմութեան կրկնումի իր տարբերակը ցոյց տուաւ: Առ այդ, ինչպէս հարկը տարի առաջ, Հայաստան այսօր եւս միջազգային յարաբերութիւններու օրակարգէն, միջազգային հանրութեան ուշադրութենէն եւ մինչեւ իսկ հետաքրքրութենէն չքանայու վտանգին տակ կը գտնուի:

Ազրպէյճանը անխափան կը յառաջանայ Արցախեան հարցը լուծուած համարելու, եւ հետեւաբար՝ կարգավիճակին մասին խնդիրը Միւսքի օրակարգէն դուրս բերելու, Հայաստանէն տարածքներու բռնակցումի, գերիներու վերադարձը մերժելու եւ Մեղրիի վրայով փանթրքական ծրագրի իրականացման ընթացքը տուող Նախիջևանի հետ միջանցքի իր նպատակներուն ուղղութեամբ: Ազրպէյճանական յառաջադրանքը կ'իրականանայ որովհետեւ Հայաստանի մէջ իշխող քաղաքական ուժը կը հաւատայ, որ պարտութիւնը «յաղթա-



Vino Rosso
R I S T O R A N T E

5291 Henri-Bourassa Blvd. W.
Saint-Laurent, Qc

514-337-6664
info@vinorosso.ca

www.vinorosso.ca

f i





RE/MAX
RE/MAX 3000 INC.
Agence Immobilière

9280 L'Acadie
Montréal Qc. H4N 3C5

Bur.: (514) 333-3000
Cell.: (514) 895-5889
Fax: (514) 333-6376



Appelez-moi pour votre
estimation gratuite

Arnaud Kuyumcu
Courtier Immobilier

նակ»ի պիտի վերածուի «տարածաշրջանային խաղաղ զարգացման դարաշրջան»ի ընթացք տալով: Թէ ճիշդ երբ, ինչպէս եւ որով թելադրանքով այդ յղացքը բանաձեւութեան երեւի առանձին ուսումնասիրութեամբ կարելի է պարզաբանել: Յստակ է, սակայն, որ գործնականին մէջ այդ նշանակեց՝ Արցախի հարցին մասին լուծութիւն, սահմանադատման եւ սահմանագծման պատճառաբանութիւններով ազդպէյճանական ոտնձգութիւններու թոյլտուութիւն եւ մինչեւ իսկ օրինականացում, բանակի վերակազմակերպութեան եւ վերազինման օրակարգի բացակայութիւն եւ միջազգային բեմին վրայ դիւանագիտութեան ամլացում:

Հայաստանի անձնատուութեան անմիջական յաջորդ օրերուն, ԱՄՆ-էն Հայաստան տեղափոխուած եւ այսպէս կոչուած «Թաւշեայ Յեղափոխութեան» օրգանական մտաւորականներէն մէկուն վերածուած քաղաքական մեկնաբան մը «բնականոն» համարեց Երեւանի մէջ շարունակուող կեանքը: Իր ընթացիկ իմաստով առնուած այդ բնորոշումը առաջին հայեացքով հարազատօրէն կը փոխանցէր իրավիճակը. մարդիկ, բնականաբար, պիտի շարունակէին իրենց առօրեան: Կը մնայ որ այդ բնորոշումը ինքնին այնքան ալ աննպատակ չէր եթէ այն տեղադրենք պատերազմի ահաւոր պարտութեան հոգեբանական ոլորտին մէջ: Անշուշտ անգլերէնով եղած այդ բնորոշումը, հետեւաբար ուղղուած մասնաւորաբար Սփիւռքին եւ աւելի յատուկ՝ Հիւսիսամերիկեան ցամաքամասի համայնքներուն, թերեւս առաջին թէկուզ եւ ակամայ եղած փորձն էր նսեմացնելու եւ պարտութեան ահաւորութիւնը, եւ Եւակողմանի Յայտարարագիրը ստորագրող Վարչապետին պատասխանատուութիւնը՝ պատերազմի սկիզբի, ընթացքի եւ աւարտի վերաբերեալ, առաջին քայլը «նորմալացնելու» պարտութիւնը ոչ թէ որպէս պատուհասային իրադարձութիւն ազգային հաւաքական ճակատագրին համար, այլ սովորական պատահար, ցաւալի անշուշտ, բայց պատահար ամէն պարագայի:

Պարտութեան յայտարարագրի ստորագրութենէն անմիջապէս յետոյ, փոխանակ հրաժարելու եւ նախանձախնդիր ըլլալու, որ Ազգային ժողովի իշխանական բացարձակ մեծամասնութիւն եղող Իմ Քայլը խմբակցութեան նախաձեռնութեամբ հետաքննիչ յանձնաժողով ստեղծուի պատերազմի սկիզբի, ընթացքի եւ աւարտի պատասխանատուութեանց մակարդակներն ու իւրաքանչիւրին պարագային ապիկարութեան, ձախաւերութեան, սխալ հաշուարկումի թէ նպատակաւորութեան ճակատագրականօրէն սխալ որոշումներ կայացողները ճշդելու եւ անոնց դէմ դատական գործ սկսելու նպատակով, Վարչապետը բանաձեւեց զինք հաշուետուութենէն զերծ պահող «պատասխանատու եմ բայց ոչ մեղաւոր» սոփեստութիւնը եւ առաջ քաշեց արտակարգ ընտրութիւններու խնդիրը՝ որպէս թէ «ժողովուրդին կամք»ին ձգելով զինք եւ իր կառավարութիւնը այս պատերազմին համար դատելու որոշումը: Յունիս 20-ի ընտրութիւններուն քուէարկողներու թիւի կէսի մասնակցութեան արդիւնքով ԱԺ-ի մէջ իր մեծամասնութիւնը պահելով, հիմա արդէն իշխող ուժը հետամուտ է պարտութեան համակերպումը ամրագրելու հայ ժողովուրդի հոգւոյն եւ սրտին մէջ:

Թէ ի՞նչը պատճառ եղաւ, որ Հայրենիքի Փրկութեան Շարժում առաջացուցած արտախորհրդարանական ընդդիմութիւնը ետ կենար կառավարութեան հրաժարականին հասնելու փողոցային զօրաշարժի իր վճռակամութենէն եւ ընդունէր ընտրութիւններու երթալու իշխանութիւններու խաղը, դե-

ռեւս այնքան ալ յստակ չէ: Աւելի՛ն, արտախորհրդարանական ընդդիմութիւնը ձախողեցաւ մէկ եւ միակ ցանկով մը ընտրութիւններուն ներկայանալ, ձախողեցաւ միջեւ իսկ Ազգային ժողովէն ներս իշխող քաղաքական մեծամասնութեան հակակշիռ ստեղծել: Ծիշդ է, հիմա կ'այ խորհրդարանական ընդդիմութիւնի դէմս «Հայաստան Դաշինք»-ին եւ «Պատիւ Ունիմ» խմբակցութիւններուն, եւ ոչ թէ անցնող երկու տարիներու նման ընդդիմութեան դերակատարութիւնը ստանձնածներուն: Բայց իշխանութիւններու թելադրած ընտրական խաղին մասնակից ըլլալով, ընդդիմութիւնը նաեւ ակամայ ընթացք տուած է պարտութեան «նորմալացման», որ իշխանութիւնները կ'ուզեն ամրագրել:

Խորհրդարանական ընդդիմութիւն առաւել փողոցային զօրաշարժ իշխանափոխութեան հասնելու համար կը թուի քաղաքական պայքարի հետաքրքրական ռազմավարութիւն մը եթէ միայն կարենայ առաջացնել զանգուածային զօրաշարժ: Ազգային ժողովի մեծամասնական խմբակցութեան մէջ ճեղք առաջացնելու հաւանականութիւնը գրեթէ անգոյ է, քաղաքական-գաղափարախօսական համոզումներով թէ չահադիտական հաշուարկումներով Քաղաքացիական Պայմանագրի պատգամաւորներուն հաւատարմութիւնը Նիկոլ Փաշինեանին զօրաւոր կը թուի ըլլալ: Այսինքն՝ Օրէնսդիր իշխանութեան մէջ ուժային փոփոխութեամբ կառավարութեան անկման հասնիլը իրապաշտ չէ: Կը մնայ փողոցային ճնշումը. Փաշինեանին իշխանութենէ հեռացնել նոյն այն ձեւով, որ իշխանութեան հասաւ եւ ապահովեց ժողովրդային զօրակցութեան օրինականութիւն: Այսինքն ընդդիմութիւնը պէտք է յաջողեցնէ զանգուածային զօրաշարժ, որուն համար առաջին հերթին պէտք է համոզէ վերջին արտակարգ ընտրութիւններուն իշխանութիւններուն չքուէարկած, բայց միեւնոյն ժամանակ ընդդիմութեան չվստահող քաղաքացիներուն լայն խաւը մը: Առաւել՝ իր պատգամով կարենայ հասնիլ իշխանութիւններուն քուէարկած բայց արդէն յուսախաբ ընտրողներուն: Այդ ընելու համար ընդդիմութիւնը ունի՞ համապատասխան պատգամ, այլ խօսքով՝ իշխանափոխութեամբ երկիր փրկելու իր հիմնական պատգամը կը հասնի՞ շարքային քաղաքացիի՞ն, կը համոզէ՞:

Խորհրդարանական արտակարգ ընտրութիւններով Ազգային ժողովին մէջ բացարձակ մեծամասնութիւն ապահոված Քաղաքացիական Պայմանագիրը ինքզինք համոզած է, որ վերահաստատած է իր օրինականութիւնը եւ ժողովուրդէն մանդատ ստացած է յետ-Նոյեմբեր 9-ի իրավիճակը կայունացնելու՝ Եւակողմանի Յայտարարութեան կէտերը հաստատագրող համաձայնագրով մը: Բայց երեւի աւելի շուտ քան ուշ անդրադառնան, որ ընտրութիւններուն յաջողութիւնն ու Ազգային ժողովէն ներս բացարձակ մեծամասնութիւնը պէտք է չփոթել անկախ պետականութեան, հայրենիքի եւ ազգի լինելութեան ճակատագիրը միակողմանիօրէն որոշելու «քարթ պլանը»: Նոյեմբեր 9-ի փաստաթուղթը հնգամեայ ժամկէտ մը տուած է իրենց եւ արդէն մէկ տարին անցաւ առանց որեւէ շօշափելի յառաջնադարձի: Աւելի՛ն, մէկ տարի կորսնցուցին եւ այդ մէկ տարուայ ընթացքին Ազդպէյճանը փաստեց որ կրնայ լարուած իրավիճակի սթաթուս քուօ-ի վրայ քուէ դնել Հայաստանը տկարացնելու համար այնքան, որ երբ ռուս իսաղապահներու ժամանակաշրջանը աւարտի չվերանորոգէ պայմանագիրը եւ նոր պատերազմ սկսի իր համար շատ աւելի նպաստաւոր պայմաններով: Այս պայմաններուն մէջ, իշխանութիւններուն կը մնայ մէկ ելք. ընդունիլ

Այս էջը կը հովանաւորեն Մ. Եւ Մ. Արք. Եւ Այս Դարձաւորեն



**Mount
Pleasant
Group**

**Built on 200
years of care
and history.**




- Full service funerals, reception, visitation and cemetery needs.
- Hold both cemetery and funeral services at these locations.
- Spacious, bright and open visitation and reception areas.
- Experience with facilitating funerals at Armenian churches.
- Armenian-speaking funeral director on staff.



CALL TODAY

For a free consultation
on pre-planning your
funeral and cemetery
arrangements.



Elgin Mills Cemetery, Cremation and Funeral Centres
1591 Elgin Mills Road East, Richmond Hill
905.737.1720

York Cemetery and Funeral Centre
160 Beecroft Road, North York
416.221.3404

Cremation and cemetery services are provided by Mount Pleasant Group of Cemeteries. Funeral services are provided by Canadian Memorial Services which is affiliated with Mount Pleasant Group of Cemeteries.

այն ինչ որ արտաքին ուժերը, իմա՝ ռուս-թրքական համաձայնությունը, կը պարտադրեն, եւ այն ընդունիլ տալ հայութեան, որով եւ ցոյց կու տան իրենց կարողութիւնը պարտութիւնը «յաղթանակ»ի վերածելու: Արդէն երեք փաստաթուղթ ստորագրած պարտութեան գլխաւոր պատասխանատու վարչապետ Փաշինեան այս ձեւով հանդէս կու գայ եւ որպէս հայ ժողովուրդի «փրկիչ», եւ խաղաղութեան նպէշեան մրցանակի թեկնածու – անշուշտ մրցանակը կիսելով Ալիեւին հետ...

Ողբերգութեան նման «երջանիկ աւարտ»ի եւ աղէտի թաւազոյն «մեթամորֆոզման» համար թերեւս անհրաժեշտ ըլլայ աւելի եւս ոստիկանացնել ժողովրդավարութիւնը, Ֆրիտլըմ Հաուս-ի ցանկին վրայ անկում արձանագրելու ռիսկը առնել խօսքի ազատութիւնը օրինականօրէն առաւել սահմանափակելով, ընդդիմադրութեան առջեւ ամէն տեսակի արգելքներ դնելով արտագնայ պատուիրականութիւններու մէջ ներառելու, եւ, հետեւաբար, իրենց ձայնը լսելի դարձնելու արտաքին աշխարհի մէջ, անոնցմէ շատերուն քաշքշելով դատարան եւ, ընդհանրապէս, ընդդիմութեան հետ քաղաքական պայքարը տեղադրելով «Լօուֆէր»ի (“Lawfare” ԱՄՆ-ի ակադեմիական Չառլզ Տանլափի (Charles J. Dunlap Jr.) 2001-յղացած բնութագրումն է որ հեղինակը սահմանած է որպէս «օրէնքի գործածութիւնը որպէս պատերազմական գործիք») տրամաբանութեան մէջ... Բայց այս բոլորէն անդին եւ աւելի կարեւոր, իշխանութիւնները պիտի փորձեն պարտութիւնը նախ հայրենի ժողովուրդին, ապա, նաեւ ինչ որ չափով Սփիւռքի մտքերուն եւ սրտերուն մէջ «նորմալացնել», վերածել «յաղթանակ»ի, համոզել, որ իրապաշտութիւն է ոչ միայն ընդունիլ պարտադրուած պայմանները այլեւ՝ համակերպիլ անոնց եւ համոզուիլ որ «ապագայ կա»... Այդ մէկուն համար անհրաժեշտ է ոչ ժխտել որ հայկական հողամասեր թիզ առ թիզ կ'անցնին Ազրայձանին, ոչ ալ դէպի Նախիջեւան միջանցքը համարել փանթրքական սպառնալիք, այլ՝ գտնել անհրաժեշտ ձեւակերպումները եւ զարկ տալ Փի.Ար.ին, որուն ոչ միայն տիրապետել գիտեն, այլ զայն նոյնացուցած են քաղաքականութեան հետ:

Այս է կացութիւնը այսօր, եւ պիտի ընդունիլ, որ Սփիւռքը, ըստ երեւոյթին, ոչինչ կրնայ ընել անոր բարեփոխման դոյզն ներդրում ունենալու համար: Իշխանութիւններու համար այդ ներդրումը անկարելի է: Ինչպէս, ընդհանրապէս, Սփիւռքեան ներդրումը այնքան ալ կարեւոր չէ եղած անցնող երեսուն տարիներուն որեւէ իշխանութեան համար, ի բացառեալ պատահական, ad-hoc, հարցերու պարագային: Աւելի կարեւոր՝ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու մէջ չկայ ոչ մէկ հայեցակարգ, ուր Սփիւռքը ունենայ լծակներ իր թէկուզ եւ սահմանափակ մասնակցութիւնը բերելու համար որոշումներու կայացման հոլովոյթին: Ի մասնաւորի Սփիւռքի նախարարութեան լուծարումէն յետոյ, երբ վերացաւ այն ոլորտը ուր առնուազն կարելի էր յուսալ այս ուղղութեամբ ինչ որ յառաջիկայացէ:

Սփիւռքի մէջ ընդդիմութեան գօրակցութիւնն ալ լաւագոյն պարագային խորհրդանշական ու սահմանափակ ըլլալու կոչուած է: Դիւրին չէ ճիշդ ընել մէկ կողմէ պետութիւն եւ իշխանութիւն հասկացողութիւնները իրարմէ զանազանել, միւս կողմէ, Հայաստանի մէջ ընդդիմութեան պայքարի ոճի ընդօրինակումով բողոքի ցոյց կազմակերպել ՀՀ դեսպանութիւններու թէ՛ դիւանագիտական ներկայացուցչութիւններու դէմ, որոնք իրենց էութեամբ պետութեան եւ ոչ թէ իշխանութիւններու ներկայացուցչական կեդրոններ են: Տակաւին,

այսպէս կոչուած «Թաւշեայ Յեղափոխութեան» ժողովրդականացած պատկերը հակառուսականութիւնն է, ինչ որ նաեւ որոշ չափով կը հաստատեն իրենց կարկառուն դէմքերէն թէ Սփիւռքի մէջ անոնց օրգանական մտաւորականներէն շատեր իրենց կենսագրութեամբ եւ քաղաքական գործունէութեամբ: Բայց իշխանութեան հասած Թաւշեայ նեղ շրջանակը խորքին մէջ իշխանութիւնը պահելու հետամուտ բախտախնդիրներու խումբ մըն է, կամ ալ սորվեցաւ բախտախնդրութիւնը քաղաքական «կատեգորիա»ի վերածել անցնող երեք տարիներուն: Չկայ Փաշինեանի հրապարակային եւ ոչ մէկ ելոյթ, ուր բացակայի Ռուսիոյ եւ նախագահ Փութինին շնորհակալ ըլլալու պարտադիր յղումը:

Յստակ չէ եթէ ընդդիմութիւնը հասկցած է, որ իշխանութիւններուն «հակառուսականութիւնը» այլեւս ոչ ոքի կը համոզէ: Աւելին՝ ոչ իսկ Մոսկուայի կը նեղացնէ ինչպէս սկզբնական ժամանակներուն, այնքան ատեն որ Փաշինեանը հասկցած է Հայաստանի եւ իր իշխանութեան վրայ մնալու հարցին կախուածութիւնը Ռուսիայէն, որ արդէն կար եւ այսօր կարծես բացարձակացած է պատերազմի հետեւանքով: Կը մնայ որ ընդդիմութեան համար Փաշինեանի նորագոյն ռուսամետութիւնը նաեւ խնդիր է, որովհետեւ, պարզ է, չի՛ կրնար հրապարակային կերպով ընդդիմանալ անոր, դեր մը, որ համոզուած թէ քաղաքական պատուէրի կարգով ստանձնած են Մայիս 2020-ին ծնունդ առած Ազգային ժողովրդական Բեւեռի մաս կազմող խմբաւորումներն ու հասարակական դէմքերը: Իշխանութիւններու ռուսամետութեան հետ «մրցակցութիւնը» այսուհետեւ թերեւս փոխադրուի այլ հարթակ՝ Ռուսիոյ հետ «ընդհանուր պետութեան» այլընտրանքին, որը «մտածելու բան է» ըսաւ ընդդիմութեան գլխաւոր ներկայացուցիչ նախկին նախագահ Ռոպերթ Քոչարեանը՝ Հոկտեմբերի սկիզբին իր տուած մամլոյ ասուլիսի ժամանակ պատասխանելով լրագրողի մը հարցումին: «Ընդհանուր պետութիւնը» կրնայ Հայաստանի Ռուսիայէն կախուածութեան գերագոյն մակարդակը ըլլալ, նկատի ունենալով երկրի տկարութիւնը կրնայ մինչեւ իսկ մեկնաբանուիլ որպէս կացութեան բանական/տրամաբանական զարգացումի հետեւանք: Կասկած չկայ, որ ոմանց համար այդ նկատուի «փրկութիւն» ինչպէս, վերիվարոյ, 1921-ին, եթէ անշուշտ նման տրամադրութիւն կայ Մոսկուայի մէջ – կամ եթէ այդ քայլը պիտանի է Ռուսիոյ, ռուսական մեծ կապիտալին: Բայց այդ արդէն կը նշանակէ, որ անկախութեան «մայրամուտը» որ պէտք է կասեցնել»ը, փոխ առնելով Վահան Յովհաննիսեան ատենին արդէն ահագանգ հնչեցնող յօդուածաշարին խորագիրը, կը բացառուի որպէս քաղաքական կեցուածք ըլլալէ:

Ինչ կը վերաբերի Թուրքիոյ հետ յարաբերութիւններուն, հոն Սփիւռքը դեռեւս Փրոթոքոլներուն ժամանակ ցոյց տուաւ, որ Հայաստանի արտաքին քաղաքականութեան սկզբունքը՝ «յարաբերութիւններ առանց նախապայմաններու» չի՛ կրնար այս կամ այն ձեւով Յեղասպանութեան հարցի անտեսման, լուցման կամ թրքական ժխտողականութեան համակերպման համահունչ ըլլալ: Քառասունչորսօրեայ Պատերազմին վարչապետ Փաշինեան առիթ չփախցուց յիշեցնելու Յեղասպանութիւնն ու Թուրքիոյ պատասխանատուութիւնը, զգուշացուց, որ պատերազմը կրնայ յանգիլ ոճիւրի կրկնութեան: Մէկ տարի յետոյ, Թուրքիոյ հետ յարաբերութիւններու մասին խօսած ժամանակ, Փաշինեան արդէն չի նշեր Յեղասպանութիւնը: Հարցը մէկ տողով իսկ ի լուր աշխարհի վերջիցեման կարգով չկայ ՄԱԿ-ի Ընդհանուր ժողո-

Սիւսէր կը հովանաւորեն Մ. եւ Մ. Միսիսեան եւ Սիւսիսեան



Գերաշնորհ Տ. Բարգէն Արք. Չարեան
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի

Կրօնական Ժողովն ու Ազգային Վարչութիւնը
և Թեմի բոլոր եկեղեցիները՝

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի
Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցի
Ս. Նշան Հայց. Առաքելական Եկեղեցի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցի
Ս. Գէորգ Հայց. Առաքելական Եկեղեցի
Ս. Պօղոս Հայց. Առաքելական Եկեղեցի
Ս. Վարդան Հայց. Առաքելական Եկեղեցի
Ս. Ստեփանոս Հայց. Առաքելական Եկեղեցի

Կը շնորհատրեն Գանատահայութիւնը, մաղթելով՝
որ յառաջիկայ 2022 տարին աշխարհի համար ըլլայ
խաղաղութեան և մարդկութեան համար ողջամտութեան տարի:

վի իր արձանագրուած ելոյթին մէջ: Ընդդիմութիւնը իշխանութիւններուն կ'ամբաստանէ յատկապէս Թուրք-ազրպէյ՝ ճանական խաղին մէջ ինկած ըլլալու համար, եւ իրաւունք ունի վերահաստատելու, որ ինչպէս 1990-ականներուն, ինչպէս Փրոթոքոլներուն ժամանակ, ինքնախաբէութեամբ պէտք է տարուիլ, որ տնտեսական ենթագրաբար «յաղթող-յաղթող» տրամաբանութիւնը հայ-թրքական յարաբերութիւնները պիտի դնէ նոր մակարդակի մը, ուր թերեւս Ցեղասպանութեան ճանաչման հարցն ալ օր մը կարելի ըլլայ օրակարգի դնել: Քառասունչորսօրեայ Պատերազմէն յետոյ Թուրքիա արդէն Ցեղասպանութեան հարցը լուծուած կը համարէ, այնպէս ինչպէս Ազրպէյճանի համար Արցախի հարցը այլեւս գոյութիւն չունի: Երկու պարագաներուն ալ ենթադրութիւնը այն է, որ պատերազմին պարտուած հայկական կողմը այնքան տկարացած է, որ այլեւս նման հարցեր օրակարգի վրայ դնելու կարողութիւնն իսկ չունի: Փաշինեանի կառավարութեան լուծութիւնը երկու խնդիրներուն նկատմամբ իրենց ենթադրութիւնը հաւաստի կը դարձնէ: Կը մնայ, որ, ինչպէս Արցախի հարցի պարագային, ընդդիմութիւնը նաեւ պիտի յիշէ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու մասին անդրադարձող իր հրապարակային յայտարարութիւններուն ժամանակ Ցեղասպանութիւնը նշել, յստակ դարձնելով որ, գէթ ընդդիմութեան համար, «առանց նախապայմաններու յարաբերութիւններ»ը չեն ենթադրեր Ցեղասպանութեան հարցի որեւէ ձեւի փստողականութեան ընդունում:

Սփիւռքը, հետեւաբար, պիտի մնայ այնքան զգաստ որքան էր Լեւոն Տէր Պետրոսեանի, Թուրք-Հայկական «Հաշտեցման» Յանձնաժողովի թէ Փրոթոքոլներուն ժամանակ, ուշադիր պիտի ըլլայ, որ Ցեղասպանութիւն բառը հնչէ իշխանութեան թէ ընդդիմութեան ոեւէ ղեկավարի հրապարակային այն ելոյթներուն, որոնք կը վերաբերին հայ-թրքական յարաբերութիւններուն: Ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ արդարահատոյցի պահանջատիրութիւնը Հայ Դատի ողնասիւնը եղաւ եւ կը մնայ, եղաւ Յիսունամեակով սկսած Սփիւռքի քաղաքականացման մղիչ ուժը: Պետական միջոցներէ զուրկ Սփիւռքին համար, Ցեղասպանութեան ճանաչումը 1980-ականներու առաջին կէսէն սկսած մինչեւ օրս, միջազգային բեմին վրայ հաւաքական զօրաշարժով արձանագրուած քաղաքական յառաջընթացի մեծ փաստն է, սեփական ուժերու վստահելով հօր պետութեան մը մարտահրաւէր կարգալու համարձակութիւնը, հայ ըլլալու ճշմարտութեան վկայութիւնը: Ցեղասպանութեան պահանջատիրութիւնը եւ արդարահատոյցը չի՝ կրնար անմասն մնալ «պետական մտածողութենէն», թէկուզ եւ երբ հասկնալիօրէն անոր պահպանումը դիւանագիտական օրակարգի վրայ ենթակայ ըլլայ հասկնալի ամէն զգուշաւորութեան:

Հարիւր տարի առաջ, երկամեայ անկախ պետականութեան եւ հայ ժողովուրդի լինելութեան ճակատագիրը որոշուեցաւ Կարսի եւ Մոսկուայի ռուս-թրքական զոյգ համաձայնութիւններով, որոնք պարտադրուեցան հայութեան: Այդ օրերուն, Լենինի գործակից պոլշեիկ հայերը գերադաս համարեցին այսպէս կոչուած «համաշխարհային յեղափոխութիւնը» եւ հասկացողութեամբ վերաբերեցան հայ ժողովուրդի ու աշխատաւորութեան իրաւունքները անոր զոհասեղանին դնելու «տրամաբանութեան», դէմ չկեցան Նախիջեւանի ու Արցախի կցմանը Խորհրդային Ազրպէյճանին փոխանակ պայքարելու, որ անոնք մաս կազմէին Խորհրդային Հայաստանին: Այդ մէկը հիմնաւորուեցաւ/պատճառաբանուեցաւ

խաղաղութեան եւ «ժողովուրդներու միջեւ եղբայրութեան» գերադաս նպատակով:

Յաջորդ երկու տասնամեակներուն, ծնունդ առնող եւ հետզհետէ որպէս Սփիւռք կազմաւորուող աշխարհացրիւ հայութեան մէկ հատուածը, ողջունեց եւ իրը ըրաւ 1921-ին քարտէզագծուած հայութեան ճակատագիրը եւ հաւատաց խորհրդային փորձառութեան ապագային: Ուրիշ հատուած մը համակերպեցաւ իրականութեան եւ լուռ մնաց անկախ պետականութեան հարցով, առանց անպայմանօրէն հրաժարելու Արեւմտահայաստանէն թէ Արցախի հայկականութենէն, եւ նուազ՝ Ցեղասպանութեան ճանաչումէն: Կար, վերջապէս, երրորդ հատուածը, որ առանց փստելու անկախ պետութեան կորուստի իրականութիւնը մերժեց համակերպիլ եւ դիմադրեց պարտադրուած ճակատագրին: Այս երեք հատուածները անշուշտ յարացուցային իտէալական բնորոշներ են, եւ թէեւ անոնցմէ իւրաքանչիւրի պարագային կարելի է ղեկավար կազմակերպութիւն մը առանձնացնել, խորքին մէջ այդ հատուածներու սահմանազատումներն ու բաժանման գիծերը երբեք այնքան բացարձակ չեն եղած: Սփիւռքի կառուցումը, հայապահպանումի գաղափարական թէ գործնական հայեցակարգն ու համայնքային կեանքի կազմակերպումը կարելի է ընկալել որպէս 1921-ին պարտադրուած իրավիճակին համակերպման թէ դիմադրութեան այլընտրանքներու տրամախոհական զարգացում: Սկզբնական շրջանին այդ զարգացումը ենթադրեց բախում, երբեմն մինչեւ իսկ արիւնալի: Բայց մօտեցման ու փոխ-հասկացողութեան պահեր երբեք չբացակայեցան եւ կարելի է ըսել որ բախումին գերադասեցին Ցեղասպանութեան Յիսուններող Տարելիցէն յետոյ:

Քառասունչորսօրեայ Պատերազմէն եւ պարտութենէն տարի մը անց, ինչպէս հարիւրամեակ մը առաջ, աշխարհացրիւ հայութիւնը դէմ յանդիման կը գտնուի անկախ պետականութեան, պատմական հայրենիքի եւ ազգային լինելութեան ճակատագիրը արտաքին ուժերու կողմէ որոշուող ծրագրին համակերպելու թէ դիմադրելու այլընտրանքին: Հայրենի իրականութեան մէջ իշխանութիւն-ընդդիմութիւն քաղաքական մրցակցութենէն ոչ անջատ բայց անորմէ անկախ եւ առանց անոր պայմանաւորումին, այս այլընտրանքին գիտակցումը կենսական է նաեւ Սփիւռքին համար: Պատմական պայմանները փոխուած են, Սփիւռքը կայացած գոյավիճակ է, եւ, մասնաւորաբար, կայ հայրենիքի հետ յարաբերութիւններու երեսունամեայ փորձառութիւն մը, որ այդպէս ալ առանձին քննարկման օրակարգ չեղաւ Սփիւռքի համար: Հետեւաբար, ազգային լինելութեան այս ճակատագրական պահուն, Սփիւռքը կրնայ հայ-ազրպէյճանական տագնապի լուծման համաձայնագրին համակերպում/դիմադրութիւն այլընտրանքին արձագանգել վերածուելով հայելիի մը, ուր կ'արտացոլուի Հայաստանի ներքաղաքական մրցակցութիւնը եւ այդ մէկը լաւագոյն պարագային կը մնայ համայնքային առօրեայի «նորմալ»ին զուգահեռ զործընթաց մը, առանց որեւէ անդրադարձի, իսկ յոռեգոյն պարագային դուռ բանալ ներ-համայնքային պառակտումի: Կամ ալ, համակերպում/դիմադրութիւն այլընտրանքը կրնայ առիթ ըլլալ ինքնագիտակցութեան եւ առաջնորդէ Սփիւռքեան գոյավիճակը 21-րդ դարու տեսլականով մտածելու, կազմակերպելու եւ ինքնուրոյն օրակարգ ստեղծելու: Երկրորդ պարագային է միայն որ «Սփիւռքեան մօտեցում»ը կ'իմաստաւորուի:

Խ. Տէր Ղուկասեան

Այս էջը կը հովանաւորեն Մանուէլ, Թամին, Գէորգ, Պուրբն եւ Պապինկ Քօւլէջեան

The all-new 2022 Lexus NX
ushers in a new era
of luxury this fall.



Starting from \$50,010*

*2022 Lexus NX 450h model shown



LEXUS GABRIEL
ST-LAURENT

Sevag Jakmakjian
Sales Manager
jsevag@gabriel.ca

GST, QST and Tire Levy are not automatically included in the displayed price of the vehicle. The displayed price includes Freight & PDI of \$2,115, Air Conditioning Charge of \$100 if applicable and Dealership Fees of up to \$395. For full and accurate vehicle pricing information, please contact Lexus Gabriel St-Laurent for a detailed quote.

Սա Մեր Հողն է Որ Զափուած Է Պաշարող Տղաներու Արեամբ. Անդրանիկ Զաւուշեան

Աղաւնոն կամ Արիաւանը

Արցախի Հանրապետութեան Քաջաթաղի շրջանի Արիաւան գիւղը կը գտնուի Գորիս-Ստեփանակերտ մայրուղիի վրայ, Աղաւնոյ գետի ձախ ափին, Բերձոր շրջանէն 14 քմ, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտէն՝ 61 քմ հեռաւորութեան վրայ:

Կարմիր տանիքներով եւ արդիական ճարտարապետութեամբ ու ոճով այս գիւղը վերակառուցուած է նախապէս Աղաւնոյ կոչուող գիւղի տարածքին՝ նպաստելով Արցախի վերաբնակեցման քաղաքականութեան եւ վերանուանումն է Արիաւան:

Կառուցման ծրագիրը կեանքի կոչուած է 2013 թուականին՝ Artsakh Roots Investments (ԱՐԻ) ներդրումային ընկերութեան եւ Ստեփանակերտի իշխանութիւններու հետ համատեղ:

2016 թուականին արդէն աւարտին հասած է ծրագրի նախատեսուած երեք փուլերէն առաջինը՝ մօտ 50 բնակարան եւ գիւղի անհրաժեշտ ենթակառուցները: Յետագային՝ մինչեւ պատերազմի սկիզբը՝ գիւղը ունեցած է 70 բնակարան:

Արիաւանը իր դիրքով՝ ռազմավարական մեծ նշանակութիւն ունեցող տարածք է: Գիւղը մնացած է հայկական եւ չէ հայաթափուած՝ հակառակ բոլոր ճնշումներուն, դաւադրութիւններուն ու սպառնալիքներուն, եւ դարձած է հայկական երկու հանրապետութիւնները իրարու կապող միակ պորտալարը:

Ինչպէ՞ս պաշտպանուեցաւ Արիաւանը եւ հայաթափուեցաւ

Գիւղը հրետակոծութենէն զխաւորաբար պաշտպանուած է մեր անառիկ սարերուն շնորհիւ: Պատերազմի ընթացքին վնասուած են՝ համայնքի 3 տուները, մասամբ դպրոցն ու մէջի գոյերը եւ կամուրջը: Այնուհանդերձ, Արիաւանը հայկական մնացած է եւ չէ հայաթափուած՝ 2019 թուականի վերջը ընտրուած, արի գիւղապետ Անդրանիկ Զաւուշեանի, անոր ընտանիքի եւ շրջապատի կամքին ու աջակցութեան շնորհիւ: Անդրանիկը՝ իր նուիրեալ կնոջ, անչափահաս հինգ զաւակներուն, մօր ու եղբօր հետ չտրուեցաւ սաղրանքներուն եւ անսասան մնաց իր հողին վրայ՝ օրինակ ծառայելով գիւղի բնակիչներուն: Ան պատերազմի առաջին օրէն գէնքը ձեռքին պաշտպանեց գիւղը, անտառներու մէջ պաշտպանական դիրքեր ստեղծեց, եղաւ ժամանակ, երբ գիւղին մէջ մնացին միայն իր ընտանիքը եւ եւս երկու հոգի, բայց ան չբարձրաձայնեց այդ մասին. երբ անոր կը հարցնէին քանի՞ հոգի կայ գիւղին մէջ, կ'ըսէր, - «49 մարդ կայ, անտառին մէջ տարբեր դիրքերու վրայ են»: Յետոյ ինք կ'երթար, տարբեր տեղերէ կը կրակէր, որպէսզի տպաւորութիւն ստեղծէ, որ գիւղին մէջ շատ մարդ կայ: Կարճ ժամանակ ետք, գիւղացիներէն շատեր վերադարձան գիւղ՝ անսալով Անդրանիկի կոչին եւ օրինակ ունենալով անոր հաստատակամ ընտանիքը:

Գիւղը հայկական պահելը Անդրանիկի համար ռազմական մեծ նշանակութիւն ունեցող հարց էր. պատերազմի ժա-



մանակ եւ տիրահոգակ Նոյեմբեր 9-էն ետք, ան թոյլ չտուաւ, որ գիւղացիները իրենց տունները քանդեն կամ այրեն, ան իր բոլոր միջոցները ի գործ դնելով՝ եղաւ գիւղացիներու նեցուկը, որպէսզի անոնք չհեռանան գիւղէն:

Պատերազմի բռնու պայքարի ընթացքին, գիւղացիներէն մէկը զոհուեցաւ, չորսը՝ վիրաւորուեցան, երեքը՝ անհետ կորածներու շարքին դասուեցան, սակայն գիւղը մաց կանգուն ու հայկական:

Ո՞վ է Աղաւնոյի գիւղապետն ու անոր ընտանիքը

Անդրանիկ Շաւարշեանը, որ յետագային սխալ տարադարձութիւններու պատճառով դարձաւ Զաւուշեան, ծնունդ է Սուրիոյ Գամիշլի աւանի. յաճախած է տեղի ազգային եփրատ վարժարանը, երբ ես այնտեղ նոր մուտք գործած էի ուսուցչական ասպարէզ՝ դասաւանդելով հայոց լեզու:

Անդրանիկը յիշողութեանս մէջ տպաւորուած է, որպէս լուռ ու միշտ մտահոգ աշակերտ միայն: Անկեղծօրէն, չեմ յիշեր իր կարողութիւնները որպէս աշակերտի, բայց Անդրանիկն ու իր մայրը կը վկայեն, որ ան երբեք չէ սիրած դպրոց յաճախել. մեր գրոյցին ընթացքին, Անդրանիկի մայրը նշեց, որ ինք միշտ դպրոցի ծնողական ժողովներէն վերադարձած է հակասական զգացումներով. Ուսուցիչները մէկ կողմէն Անդ-

Այս էջը կը հովանաւորեն Մ. և Մ. Դրայր և Ռուբի Զաւարթեան



րանիկի երկուորեակ քրոջ մասին գովեստի խօսքեր շռայլած են, իսկ միւս կողմին դժգոհութիւններ լսած է Անդրանիկի ըրած չարածիճիւթիւններուն եւ դաս չսորվելուն մասին:

Ուսուցչուհիներէն մէկը, օր մը մտահոգ մօր վիճակը տեսնելով կ'ըսէ,– «Մի տխրիք, պայման չէ, որ ամէն աշակերտ աշխատասէր ըլլայ, Ատիստն ալ ծոյլ աշակերտ էր, յետոյ ողջ մարդկութիւնը իրեն պարտական մնաց՝ իր կատարած գիւտին համար»:

Այսօր, Անդրանիկին ծանօթ է գրեթէ ողջ հայութիւնը, եւ պատահական չէ Շաւարշեան մականունին Չաւուշեան դառնալը. Անդրանիկի մէջ միաձուլուած են Զօրավար Անդրանիկի վճռակամութիւնն ու Գէորգ Չաւուշի քաջութիւնը: Անդրանիկի ուժի կամքի եւ քաջութեան աղբիւրը անոր մայրն է, կինը, եղբայրն ու զաւակները, որոնք ամէն օր մահուան աչքերուն նայելով՝ մնացին իր կողքին եւ դարձան անոր աջակիցն ու պայքարի ուղեկիցը:

Շաւարշեան ընտանիքը 1997 թուականին տեղափոխուած է Լիբանան, այնտեղ, դպրոց չսիրող Անդրանիկը դարձած է վարպետ ոսկերիչ եւ ապրած բարեկեցիկ կեանքով:

2011 թուականին, բարեսիրական ծրագրեր իրականացնելու առաքելութեամբ՝ Անդրանիկը առաջին անգամ այցելած է

Արցախ ու մինչեւ հոգիին խորքը սիրած այդ դրախտավայրը: Մի քանի անգամ երթալ գալէն ետք՝ ան վճռած է ձգել Լիբանանի բարեկեցիկ կեանքն ու տեղափոխուիլ Արցախ:

2014-ին, Հայրենիքի հանգէպ սէրը, մայր հողին վրայ ապրելու կամքը եւ հաւատքը՝ վաղուայ օրուան հանդէպ, Անդրանիկը իր ընտանիքին հետ տեղափոխուած է Արցախի Բերձոր շրջան, իսկ աւելի ուշ, Աղաւնոյ՝ գայն իսկական Արիւսեան դարձնելու վճռակամութեամբ: Երբ Չաւուշեան ընտանիքը տեղափոխուած է Աղաւնոյ, այնտեղ ընդամենը կ'ապրէր 20 ընտանիք, որոնց թիւը յետոյ հասած է 70-ի:

2019-ի վերջը, Արիւսեանի Եկեղեցւոյ կողքին ապրող Անդրանիկը՝ Աստուծոյ օրհնութեամբ դարձաւ գիւղապետ, որ գիւղն ու գիւղացիները փրկէ իր մարտունակութեամբ, քաջութեամբ, վճռակամութեամբ ու դիւանագիտութեամբ:

Ռուսերէնին չտիրապետող Անդրանիկը կրցաւ շահիլ ռուս զինուորներու վստահութիւնը եւ պարտադրեց իր կամքը. ան իր զէնքը չյանձնեց եւ հայոց Եռագոյնը ծածանուած պահեց:

Չաւուշեան ընտանիքի կանայք իսկական հայուհիներ են, հերոսածին մայրը՝ Քնարիկը եւ հերոսուհի կինը՝ արմատներով Արցախցի Քրիստինէն, իրար շողախած են Սփիւռքի մէջ մեծցած ազգային դաստիարակութեան եւ Արցախցի խիզախ նկարագրերը ու կանգնած են Անդրանիկի ու անվախ եղբոր ու գիւղի ողջ բնակչութեան կողքին: Անոնք պատերազմի ընթացքին եւ անկէ ետք, կազմակերպած են կռուին մասնակցող գիւղացիներուն սնունդը ապահովելու հարցը, լուծած են գիւղացիներուն տարբեր խնդիրները եւ կառնած են հողին՝ գայն չլքելու վճռականութեամբ:

«Սահմանին այսքան մօտիկ ապրելու գիտակցութիւնը թոյլ չի տար, որ հասնինք հիասթափութեան: Այս հողին համար այնքան արիւն թափուած է, պէտք է Հողին վրայ ապրելով պահենք գայն»,- կ'ըսէ Քրիստինէն:

Այսօր, Անդրանիկի եւ իր ընտանիքի համար այլընտրանք չկայ,– «Հինգ երեխաներս պիտի մեծնան այս հողին վրայ, դժուարութեամբ, կեանքի ու պատերազմի դասերը քա-



Այս ֆոթո կը հովանաւորեն Մ. եւ Մ. Յակոբ եւ Վնասիք Մկր յաւաքութեան

ղած եւ այն վճռականութեամբ, որ հողը պէտք է պահեն հողին վրայ ապրելով. թող տղաս ըսէ հայրս զոհուեցաւ, բայց չըսէ յանձնուեցաւ», - կ'ըսէ Անդրանիկը:

Տեղին է նշել, որ Անդրանիկի հինգ զաւակներէն չորսը ծնած են Արցախի մէջ, երկրորդ որդին ծնած է ապրիլեան քառօրեայ պատերազմի ժամանակ, երբ հայրը Մարտի դաշտին էր՝ խրամատի մէջ պայքարել մղէր, իսկ հինգերորդը՝ 2020 թուականի Յուլիսին:

Արիւսական ախար

Ախար, Արիւսական սահմանէն մօտ 2.5 քմ հեռավորութեան վրայ է:

Պատերազմէն առաջ, այնտեղ կ'ապրէր մօտ 300 մարդ, պատերազմէն ետք՝ 180:

Գիւղը ունի դպրոց, որ կը կրէ Գարեգին Նժդեհի անունը, ունի բուժկէտ եւ նորոգուած դահլիճ: Այնտեղ, տարբեր երկրներու մէջ ապրող մեր հայրենակիցներու աջակցութեամբ, կը ստեղծուին նոր աշխատանքներ:

Վարսահարդարման եւ մատնահարդարման համար անհրաժեշտ գոյք ու պարագաներու նուիրատուութեամբ՝ մի քանի աղջիկ աշխատանք ունեցան, կարի մեքենաներու շնորհիւ՝ մի քանի կին եւս զբաղուած ունեցան:

Գիւղին մէջ բնակչութեան ներկայութիւնը ամրացնելու համար, այնտեղ յաճախ կը նշուին աւանդական տօներ. Այս տարի նշուեցաւ «Վարդավառ»-ը եւ կը կազմակերպուին համերգներ՝ Հոկտեմբերին այնտեղ համերգով հանդէս եկաւ Հայաստանի վաստակաւոր երգչուհի Շուշան Պետրոսեան:

Հոկտեմբեր 3-ին, Ռուս խաղապահներու հսկողութեան տակ գտնուող Արիւսականի Սուրբ նահատակաց եկեղեցւոյ մէջ, տեղի ունեցաւ հաւաքական մկրտութիւն՝ նախաձեռնութեամբ Արիւսական համայնքի ղեկավար Անդրանիկ Զաւուշեանի, ձեռամբ եւ գլխավորութեամբ Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տէր Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանի եւ մասնակցութեամբ Արցախի թեմի արժանապատիւ քահանաներու եւ բարեշնորհ սարգաւակներու: Համայնքի 60 զաւակ՝ ծեր ու երեխայ, այր ու կին, մկրտուեցան եւ օրհնուեցան Սուրբ միւռնով:

Աղաւնոյի գիւղապետը բոլորին կոչ կ'ուղղէ այցելելու Արցախ՝ անցնելով Արիւսականէն: Միշտ այն հարցիս, թէ այսօր կ'ուզէ Աղաւնոյին օգնել, ինչի՞ կարիք կայ, պատասխանը կ'ըլլայ՝ աւելի լաւ է քան իրենց աչքով տեսնեն, թէ ինչի կարիք կայ եւ իրենք որոշեն իրենց ընկիւրը:

Վերջերս, Արիւսական այցելեց նաեւ «Հորիզոն»ի գլխա-



ւոր խմբագիր Վահագն Գարագաշեան: Պատմելով գիւղապետին ու գիւղացիներուն հետ իր հանդիպման մասին ան կը հաստատէ. «Այս բնակավայրը վերածուած է Արցախը մայր հայրենիքին կամրջող պորտակապի վերջին օղակին, նորօրեայ հայոց Սպարտային, ուր իւրաքանչիւր բնակիչ դարպասապահ զինուոր ու մարտիկ է»:

«Զոհուած տղաները յաղթած դացին, կռուի ժամանակ աւելի հեշտ էր, հիմա է դժուար, պէտք է ժամանակ չկորսնցնենք, պէտք է գիշեր ցերեկ աշխատելով շէնցենք ու հօրացնենք մեր երկիրը, սա մեր տունն է, մեր հողը, մեր ապրելու յոյսը, որ չափուած է պայքարող տղաներու արեամբ», - կ'ըսէ «ԱՐԻ» ծրագրով վերակառուցուած Արիւսականի արի գիւղապետը:

Նայիրի Մկրտիչեան



Այս ֆոթո կը հովանաւորեն Պաշտօն, Աստի-Միկի տւ Թափն Աօսի Զագահեան

Merry Christmas & Happy New Year

TWO STORES TO SERVE YOU

SCARBOROUGH

1909 Lawrence Ave E,
Scarborough, ON M1R 2Y6
(416) 755-5084

MISSISSAUGA

720 Bristol Rd W, Unit 1,
Mississauga, ON L5R 4A5
(905) 502-9292



For More Information Please Visit Our
Website arzfinefoods.com
Social Media Pages @arzfinefoods

Introducing
ARZ Rewards Program
Scan To Learn More





Մեր բազմահազարամյայ պատմության կողքին, ռազմի դաշտի վրայ պարտության եւս ընծայած դասերը, իրենց սպառնալիչ ու ցաւագին պատգամներով հանդերձ, ուղեցոյց են դէպի անաչառօրէն վերանայուած ու համբերատար ճիգերով վերանորոգ ուղիներու արշալոյսին: Մեծ են այն ազգերը, որոնք պարտութիւնները յաղթանակի կը վերածեն, վկայ Վարդանանց պատերազմի անժխտելիօրէն պանծալի պատգամը:

Հայ Օգնութեան Միութեան աւելի քան տասնըմէկ տասնամեակներու պատմութիւնը, իր **ԺՈՂՈՎՈՒՐԴԻՍ ՀԵՏ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՍ ՀԱՄԱՐ** անսակարկ լոզունգով, իր աշխարհացոյի ՀՕՄիիներու նուիրեալ ու տենդագին ցանքերով եւ անդով աշխատանքով՝ որպէս գթութեան հոգատար, հարազատ քոյրեր ու մայրեր, սերտօրէն կ'առնչուի ու կը նոյնանայ հայ ժողովուրդի նորագոյն ճակատագրական պատմութեան հետ, յաւիտենապէս զօդուած հայ տարագիր թէ՛ հայրենաքնակ ժողովուրդին ու պատմական հայրենիքին:

Միրելի ՀՕՄականներ, յարգարժան բարերարներ, նուիրատուներ, համակիրներ ու հայրենակիցներ, անցնող տարին արդէն անցաւ պատմութեան մութ էջերուն մէջ, իր տեղը տալով նոր Ամանորին ու Բրիստոսի Սուրբ Ծննդեան պայծառ տօներուն, որոնք հաւատացած ենք, նախակարապետը պիտի ըլլան լաւագոյն օրերու եւ հայութեան ու համայն քաղաքակիրթ մարդկութեան յուսալից երազներուն իրականացման:

Ծնորհաւոր նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ

**Հայ Օգնութեան Միութեան
Կեդրոնական Վարչութիւն**

Throughout our millennial history, the lessons learned from defeats on the battlefield, despite their demeaning and painful messages, remain a true compass pointing to the resurging dawn of repaved paths reached through unbiased reassessment, and patient, yet unrelenting effort. Great are those nations, who turn defeats into victory – witness the glorious message of our Vardanants Debacle, and its sixty thousand Martyrs.

The over eleven decades-long history of the Armenian Relief Society, with its Motto of total commitment, **WITH THE PEOPLE, FOR THE PEOPLE**, its globally spread devoted and relentless efforts and activities as true sisters and mothers of mercy, becomes one with the trials, tribulations, and victories of our nation's recent history, eternally attached to our globally dispersed people and our historic Homeland.

Dear ARS members, honored Benefactors, Donors, Supporters and Fellow-Armenians, the past year is now part of the dark pages of history, ceding its place to the bright Holy Days of a New Yuletide, the Blessed Birthday of our Lord, Jesus Christ, days, that – we firmly believe – will be the harbingers of brighter days bringing the realization of hopes and dreams of all civilized Humanity.

We wish you all a Merry Christmas and a Happy New Year.

*Armenian Relief Society
Central Executive Board*

**MERRY
CHRISTMAS**

**and
HAPPY
NEW
YEAR**

J'ai un secret à vous confier.

Je suis né il y a bien longtemps de cela
Dans une contrée lointaine, et même au-delà
Où j'ai appris à vivre, la joie dans le cœur
Avec l'entraide et l'amour en ma demeure

Un jour, ce fut à moi, d'en retour, donner
Mais j'ai voulu le faire pour le monde entier
Malgré le froid, la faim, par les cheminées
J'offre de la douceur, de l'espoir en bouffées

Si je suis si grand, robuste et valeureux
C'est qu'il y eut avant moi, tous mes aïeux
Qui m'ont appris à vivre vrai, authentique
Sous serment, à être bon, unique et magique

Tout comme vous, j'apprends,
j'aime et encore je pleure
Je suis un humain,
avec toutes mes couleurs

Apanage que j'embrasse
avec tant de candeur
Sauf peut-être concernant

...
ma peur des hauteurs.

LE GROUPE MAURICE
vous souhaite
de joyeuses fêtes 2021



ՀՕՄ-Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Եւ իր 10 մասնաճիւղերը կը շնորհաւորեն
Նոր Տարին եւ Ս.Ծնունդը
իրենց բարերարներուն, նուիրատուներուն,
բարեկամներուն եւ անդամներուն
website www.ars-canada.ca
e-mail ars-canada@bellnet.ca



«ԱՐԱՉ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՎԱՆԳՈՒՎԸՐ

«ՌՈՒԲԻՆԱ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ԹՈՐՈՆԹՕ

«ՌՈՒԲԻՆԱ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՈՒԻՆԾԸՐ

«ԱՐԱԳԱՍՏ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՄԻՍԻՍՈԿԱ

«ՍԵՒԱՆ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՕԹԹԱՈՒԱ

«ՍՕՍԷ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՄՈՆԹԵԱԼ

«ԱՐԵՒ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՀԱՄԻԼԹԸՆ

«ԱՐԱՉ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ՍԵՆԹ ԳԱԹՐԻՆՉ

«ՇՈՒՇԻ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ԼԱԻԱԼ

«ՄԵՂՐԻ»
ՄԱՍՆԱՃԻՂ
ԳԷՄՊՐԻՃ

Ընդդիմութեան եւ Ռիմադրութեան Զոյգ Մարտահրաւերներու Գիտակցութեամբ

Ընդդիմութեան ալիքը արդէն մտած է նոր փուլ, եւ «Հայաստան» դաշինքի յայտարարութիւնները կը խօսին համաժողովրդական դիմադրական շարժում չղթալազերծելու նոր իրականութեան մասին: Այսինքն նոր եւ հզօր սկիզբ մը՝ մեր ժողովուրդի կեանքին ու մտքին մէջ եւ նոր մեկնա՛րկ մը՝ մեր երկրին համար: Ընդդիմութենէն դէպի դիմադրական շարժում եւ դէպի նոր քաղաքական մշակո՛յթ: Այս տեսլականն է, որ այժմ կ'ուղղորդէ պարտութեան վարչակարգին հակադրուած քաղաքական միտքը՝ Հայաստանի եւ Արցախի մէջ:

Հետեւաբար կարելոր է, որ յստակօրէն հասկնանք էութիւնը այս համազգային ջրբաժանին եւ յստակօրէն զանազանե՛ք իրարմէ մեր դոյապալքարի այս երկու իրերահաղորդ բաղկացուցիչները: Եւ կարելոր է, որ անյապաղ կողմնորոշուինք որպէս ազգ, քանի որ ժամանակը արդէն վաղուց կը գործէ մեզի դէմ: Ընդդիմութիւն եւ դիմադրութիւն եզրոյթները պէտք է անպայման տարբերութիւն մը պարունակեն, որպէսզի չվերածուին փուճ լողունգի: Պարզ խօսքով, պարտութեան վարչակարգին դէմ ծառացող ընդդիմութիւնը պիտի մտնէ պայքարի նոր ասպարէզ՝ բոլորովին նոր ռազմավարութեամբ եւ նոր առաջադրութիւններով, որոնք նաեւ կը սահմանեն բնոյթը դիմադրական շարժումին: Այս առումով, այսօր ընդդիմութիւնն ու դիմադրութիւնը նոյն պայքարին երկու լրացուցիչ թեւերն են: Նոյն դատին անքակտելի բաղադրիչները:

Ցատկացնենք:

Պարտութեան վարչակարգին դէմ չղթալազերծուած յետպատերազմեան պայքարը շատ արագօրէն ծնունդ տուաւ ընդդիմադիր ճակատի ձեւաւորման, որուն մաս կը կազմէին, Դաշնակցութեան կողքին, շարք մը հեղինակաւոր կազմակերպութիւններ, եւ որոնք միասնաբար ստեղծեցին Հայրենիքի փրկութեան շարժումը՝ առաջնորդ ունենալով ՀՀ առաջին վարչապետ Վազգէն Մանուկեանը:

Շարժումը արագօրէն նախաձեռնեց շարք մը հանրահաւաքներու եւ քարոզչական ջլուտ աշխատանքի՝ հաւաքագրելով ՀՀ հասարակութեան այլեւայլ շերտերը եւ պահանջելով պարտութեան վարչակարգի հրաժարականը: Յետպատերազմեան համատարած բարոյալքութեան եւ շփոթի օրերն էին, եւ հասարակութեան լայն մէկ զանգուածը կը մերժէր բաժին վերցնել երկրի քաղաքական գործընթացին մէջ: Ան պարզապէս կը մերժէր մտնել ընտրութիւն կատարողի դժուարին արարքին մէջ եւ կը փորձէր ամէնէն դիւրամատչելի զէնքերով վերապրիլ կամ փախուստ տալ երկրէն:

Այս շփոթ կացութեան մէջ պարտութեան վարչակարգը



արագօրէն ձեռնարկեց Ազգային ժողովի ընտրութիւններու եւ կարողացաւ վերարտադրել ինքզինք՝ քուէարկողներու շատ փոքր մէկ համեմատութեան մասնակցութեամբ եւ յաւակնելով նոր եւ կամայական լիազօրութիւններու, որոնք երկիրը բերին իր ներկայ մեծապէս վտանգաւոր վարչահրամայական դրութեան: Իր կարգին, ընդդիմութեան ծանրութեան կեդրոնը փոխադրուեցաւ Ազգային ժողով՝ ծնունդ տալով խորհրդարանական եւ արտախորհրդարանական զոյգ հատուածներու:

Միջանկեւ'լ՝ պարտութեան վարչակարգը երկրին պարտադրեց 2020 նոյեմբեր 9-ի եւ 2021 յունուար 11-ի եռակողմանի համաձայնագրերը՝ թշնամիին յանձնելով Արցախի եւ Հայաստանի կենսական տարածքները եւ ճամբայ հարթելով յանցագործ գործընթացի մը, որ թշնամիի յաղթարշաւին առջեւ լայն կը բանայ հայոց հայրենիքի դռները: Անձնատուութեան այս ամօթալի ընթացքը կանգ չէ առած: Ան կը շարունակուի եւ ամէն օր կը դրսեւորէ նորանոր պահանջներ թշնամիին կողմէ: Վկա՛յ՝ Գորիս-Կապան կենսական մայրուղիի յանձնումը այսօր ազդեցական իրաւասութեան:

Այսօր պարտութեան վարչակարգը զբաղած է նոր լուղունգներ հնարելով եւ «ճանապարհներու ապաշրջափալման» եւ նոր «կոմունիկացիա»-ներու հաստատման տխմար

Կը գտնուինք մեր պատմութեան ամէնէն վտանգաւոր խաչմերուկին վրայ: Այս իշխանութիւնը գուրկ է երկրի պաշտպանութեան համար անհրաժեշտ բոլոր էական ուժակազմութիւններէն: Ան գուրկ է դիմադրական որեւէ պատրաստակամութենէ (preparedness) եւ կորովէ: Ան չի հաւատար ինքզինքն՝ հակառակ իր սնտոյի հոնտորաբանութեան: Ան չի հաւատար մեր ժողովուրդի բարոյական ուժին: Ան կը յուսայ ողորմի քաղաքականութեամբ, Գահաճականութեամբ, թշնամիին կենսական զիջումներ ընելու գնով հասնիլ ենթադրեալ խաղաղութեան եւ սկսիլ առեւտուրի:

Այս էջը կը հովանաւորեն Մ. եւ Մ. Մեյրոս եւ Օւիլի Գաւիֆ-Տեան



խօսող թույլ կը փորձէ շինծու խայծեր ցանել հանրութեան մտքերէն ներս եւ փրկել ինքզինք ժողովուրդի զայրոյթէն:

Հիմա հասած ենք հոս: Հասած ենք այն կէտին, ուր այլեւս բացուած է լայն անջրպետ մը՝ մեր ազգային գերագոյն շահերուն եւ իշխող համակարգին միջեւ:

Իսկ պարտութեան վարչակարգը ողբալիօրէն պարպուած է իմաստէ: Ան սպառած է ինքզինք: Սպառած է թշնամին առջեւ: Սպառած է Ռուսաստանի եւ առհասարակ միջազգային դիւանագիտութեան առջեւ: Սպառած է ազգին առջեւ: Սպառած է ընդդիմութեան առջեւ: Սպառած է իր նախկին հաւատաւորներու կարեւոր մէկ հատուածին առջեւ: Կը վերապրի միայն ու միայն՝ իր վարչահրամայական գործիքակազմը գործի լծելով, ապակողմնորոշելով հանրութիւնը եւ երկիրը տանելով դէպի ոստիկանական բռնատիրութիւն:

Կը գտնուինք մեր պատմութեան ամէնէն վտանգաւոր խաչմերուկին վրայ: Այս իշխանութիւնը գուրկ է երկրի պաշտպանութեան համար անհրաժեշտ բոլոր էական ուժակապակցութիւններէն: Ան գուրկ է դիմադրական որեւէ պատրաստականութենէ (preparedness) եւ կորովէ: Ան չի հաւատար ինքզինքին՝ հակառակ իր սնոտի հետտորաբանութեան: Ան չի հաւատար մեր ժողովուրդի բարոյական ուժին: Ան կը յուսայ ողորմութիւն քաղաքականութեամբ, նահանջականութեամբ, թշնամին կենսական զիջումներ ընելու գնով հասնիլ ենթադրեալ խաղաղութեան եւ սկսիլ առեւտուրի: Եւ անշուշտ ընդդիմութիւնն է, որ դրուած է թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին սպառնալիքներուն դէմ երկիրը ռզեզիներու ու զայն պաշտպանելու եւ երկիրը վերականգնելու դժուարին մարտահրաւէրին առջեւ:

Այս ճակատագրական կացութիւնը դիմադրաւելով, ՀՀ քաղաքական ուժերը, որոնք այսօր խմբուած են ընդդիմութեան դրօշին տակ, անպայման պիտի դիմեն արտակարգ միջոցներով՝ արագօրէն ընդարձակելու ընդդիմութեան հասողութեան ծիրը՝ պայքարի ալիքին մէջ ներգրաւելով նորանոր ու թարմ ուժեր: ՀՀ սահմանադրութեան ընձեռած քաղաքացիական անհնազանդութեան բոլոր գէնքերով զինուած՝ ընդդիմութեան ալիքը պիտի տարածուի մայրաքաղաքէն մինչեւ մարզային կեդրոններն ու գիւղերը: Եւ պարտութեան վարչակարգը ինքզինք պիտի գտնէ երկրի օրինապահ եւ պահանջատէր քաղաքացիութեան հաւաքական կամքին առջեւ: Պարզ խօսքով, ընդդիմութեան թիրախը, այս պարագային, երկրի ներքին ճակատի սպառնալիքներն են: Զերծել երկիրը պարտութեան բոլոր գործօններէն: Դուրս բերել զայն պար-

տութեան վարչակարգի փակուղիէն: Հայոց հայրենիքը չէ ստեղծուած պր. Փաշինեանի եւ իր համախոհներու քմահաճ եւ անկայուն եւ փակուղային քաղաքականութեան համար: Վերստանձնել երկրի ճակատագիրը ղեկավարելու կենսական պարտականութիւնը:

Բայց նաեւ մեր դռներուն առջեւ կը գտնուի արտաքին սպառնալիքը՝ իր բոլոր մարտահրաւէրներով: Նոյեմբեր 9-ի եւ յունուար 11-ի համաձայնագրերը թշնամին դրած են ամբարտաւանութեան գերագանց դիրքերու վրայ: Մի՛ հարցնէք, թէ ի՞նչ կ'ընէ Մոսկուան այս եպերելի գործընթացին մէջ: Հարցուցէք, թէ ի՞նչ պիտի ընենք ՄԵՆԲ՝ թշնամին դուրս բերելու իր ապուշ զգայախաբէութենէն: Լուրջ ազգին վայել ի՞նչ վարքագիծ պիտի դրսեւորէ հայութիւնն ու շարքային հայը, որպէսզի Մոսկուան եւ բոլոր միւս թերահաւատները համոզուին, որ վերջ գտած է ժամանակը Հայաստանը որպէս ոտնագնդակ գործածելու: Թշնամին պիտի տեսնէ, թէ ինչպէ՛ս իր աչքերուն առջեւ երկրի համատարած ընդդիմութիւնը սկսած է աւելի պարտութեան համակարգի սարգոստայնները: Թշնամին յանկարծ ինքզինք պիտի զգայ ահելիօրէն անպաշտպան: Թշնամին յանկարծ պիտի անդրադառնայ, թէ ինք ոտք դրած է մեր հայրենի հողին վրայ, որ այլեւս անպաշտպան չէ: Թշնամին յանկարծ պիտի մտնէ անապահովութեան ոլորտէն ներս եւ պիտի դադրի երազելէ, որ կրնայ «մաքսակէտ»-եր գետեղել մեր հողերուն վրայ: Պարզ խօսքով, Բաղին Կողբազին իրենց գլխուն պիտի ուտեն Դաւիթի կոտը եւ վազն ի վազ հասնին Մըսրը: Ասիկա այն հարուածային դիմադրական շարժումն է, որ ուղղուած է երկրի արտաքին սպառնալիքներուն դէմ: Ասիկա այն երկրորդ բազուկն է մեր ընդհանրական մարտակարգին, որով առաջինը առաւել եւս թիրախային կը դառնայ եւ երկուքը միասին՝ ԴԻՄԱԴՐԻՐ՝ մեր բոլոր թշնամիներուն դէմ: Այս բաներն էին, զորս կը սորվեցնէր ձեզի լուսահոգի Մասթըր Կարոն, որ հիմա կը հետեւի մեր քայլերուն Եռաբլուրի իր անհանգստալայրէն:

Ընդդիմութիւն եւ դիմադրութիւն պիտի գործեն առաւելագոյն ուժականութեամբ (compounded intensity), մին՝ ներքին դաշտը մաքրելու եւ միւսը՝ արտաքին, որպէսզի կարողանանք առաւելագոյն արագութեամբ չրջել պատերազմով ծուռ դարձած անիւը եւ կարողանանք վերանուաճել մեր արժանապատիւ տեղը տարածաշրջանի ուժային համաստեղութեան մէջ:

Մեր առջեւ բացուող ազատագրական գործի այս ծաւալուն տեսլականը կը պահանջէ միանգամընդմիջտ թօթափել մեր գիտակցութենէն պարտութեան ամլացնող թոյները: Մեր հասարակութիւնը պէտք է չունի այդ թոյներուն: Մենք ազատախոհ ազգի զաւակներն ենք: Մեր պատմութիւնը սկիզբ առաւ Հայկեան ազատախոհութեան ակունքներէն: Մեզի խորթ են Փաշինեանական քաղաքականութեան խաբէութիւնները: Խաղաղութեան կեղծ լոգուններով առաջարկուող դարչելի թմրանիւթերն են անոնք, որոնք իսպառ պիտի չքանան, երբ ներքին եւ արտաքին սպառնալիքներու դէմ ծառացող մեր համապարփակ ռազմավարութիւնը սկսի ցնցել հիմքերը փաշինեանական պարտուողականութեան:

Հետեւաբար՝ վե՛րջ թերաբժէքութեան բոլոր ճնշիչ հոգեկիճակներուն: Վե՛րջ՝ ամուլութեան: Վե՛րջ՝ մահացու շփոթին: Ժամն է համարձակօրէն վերցնելու ձեռնոցը եւ միանալու ազատագրական շարժման վճռական ալիքին:

ԿԱՐՕ ԱՐՄԵՆԵԱՆ

Սիւսէր կը հովանաւորեն Մ. եւ Մ. Միսնսթիս Կրախարիսթրիօս եւ Թամար Մուշախան



WWW.CENTREARMENIE.COM

Իրանեան Գործուն Ու «Զանգեզուրի Միջանցք»-ը

Իրանի Իսլամական Հանրապետության եւ Ազրայէճանի միջեւ ստեղծուած լարուածութիւնը իր վրայ կեդրոնացուց լուսարձակները՝ նկատի ունենալով ուժանիւթի եւ ապրանքներու տարանցման համար Հարաւային Կովկասի ներկայ հանգուցային կարեւոր դիրքն ու ռուս-թրքական եւ ռուս-պարսկական շահերու բախման ու պատերազմներու պատմական թատերաբեմը ըլլալուն իրողութիւնը:

Հարկ է նշել, որ տարածաշրջանի մեծամասնութեամբ չի բնակչութիւն ունեցող երկու պետութիւններուն միջեւ փոխադարձ կասկածները գոյութիւն ունին 1991-էն՝ Ազրայէճանի անկախութենէն ի վեր, որովհետեւ անոնց վարչակարգերը կտրուկ կերպով տարբեր են. Մէկը աշխարհիկ է, միւսը՝ կրօնական: Այդ լարուածութեան կարեւոր ազդակներէն մէկը Իրանի շուրջ 20 միլիոն ազրայէճանցիներով բնակուած՝ հիւսիսային շրջանի նկատմամբ ազրայէճանական անորոշակներն են, ինչպէս նաեւ Ազրայէճանի, նախքան 19-րդ դարուն Ռուսական կայսրութեան մաս կազմելը, Պարսկական կայսրութեան պատկանող իրանեան նահանգ մը ըլլալուն պատմական իրողութիւնը:

Հոկտեմբերի սկիզբը, Թեհրանի եւ Պարսի միջեւ բանավէճի ամենաթէժ պահուն, Ազրայէճանի նախագահ Իլհամ Ալիեւ ակնարկեց, որ ազրայէճանցիներու իրանեան մեծամիւլ համայնքը կրնայ ոտքի կանգնիլ, պաշտպանելու համար Ազրայէճանի Հանրապետութեան մէջ բնակող իրենց ազգակիցները: Թեհրանի համար այդպիսի յայտարարութիւնները բնականաբար Իրանի մէջ ազրայէճանական փոքրամասնութեան մօտ անջատողականութեան ստեղծման սպառնալիք էր:

Երկու երկիրներուն միջեւ լարուածութեան կարեւորագոյն մէկ այլ գործօնը՝ իսրայէլեան գործօն է, որ իր կարգին երկար տարիներու պատմութիւն ունի: Ազրայէճան-Իսրայէլ սերտ գործակցութիւնը սկիզբ առած է 1992-ին: Իսրայէլ 15 յունուար 2007-ին, Իրանի Շիրազ շրջանին մէջ ահաբեկեց Իրանի հիւլէական ուժանիւթի աւագ գիտնական Արտեշիր Հոսէյնփուրը, 2010-էն 2012-ի միջեւ ահաբեկեց հիւլէական ոլորտի իրանցի չորս այլ գիտ-



նականներ՝ Մասուտ Ալիմհամատին, Մաթիտ Շահրիրին, Տարուիշ Ռեզայէ-տինեթատը եւ Մոսթաֆա Ահմատի Ռոշանը, իսկ նոյեմբեր 2020-ին, Մոհաշէն Յախրիզատէն: 2011-ին եւ 2021-ին իրանեան իշխանութիւնները ձեռքաւարեցին սպանութիւններու մեղսակից շարք մը իրանցիներ, որոնք իսրայէլեան գաղտնի սպասարկութեան՝ Մոսատի գործակալներ էին: Արեւմտեան գաղտնի սպասարկութիւններ եւ ամերիկացի պաշտօնատարներ հաստատեցին իսրայէլեան կապը: Այդ գործողութիւնները կը ղեկավարուէին Ազրայէճանի տարածքէն, ուրկէ, ըստ իրանեան կողմին, 2018-ին շղթայազերծուած էր նաեւ իրանեան հիւլէական գաղտնի թղթածրարներու գողութեան գործողութիւնը:

Ի տարբերութիւն վերոնշեալներուն, «Զանգեզուրի Միջանցք»-ի գործօնը աւելի նոր է, երկու երկիրներու միջեւ յարաբերութիւններուն առնչուող հարցի մը մակարդակէն շատ աւելի բարձր եւ լուրջ հարց է, որովհետեւ աշխարհաքաղաքական հարց է ուստի եւ, իրանեան տեսանկիւնէն դիտուած, աւելի վտանգաւոր ու խնդրայարոյց է քան վերոնշեալ գործօնները:


Իրանի Իսլամական Հանրապետութիւնը աւանդաբար Արցախի հարցի նկատմամբ ունեցած է հաւասարակշռուած դիրքորոշում, սակայն վերջին պատերազմի ընթացքին, ու անկէ ետք, իրանցի բարձրաստիճան պաշտօնա-

տարներուն յայտարարութիւնները ցոյց տուին, որ Թեհրանը այդ աւանդական դիրքորոշումէն չեղած է՝ հակառակ այն իրողութեան, որ Արցախեան Բ. պատերազմի ընթացքին Իսլամական Հանրապետության համար խնդրայարոյց Ազրայէճան-Իսրայէլ կապերը եւ շրջանին մէջ ժիւղատական վարձկաններու տեղակայման փաստերը յստակօրէն երեւցան:

Կ'ըսուի, թէ քաղաքականութեան մէջ բազմադարեան փորձառութեան տէր իրանցիներուն քայլերը լաւապէս սերտուած կ'ըլլան, սակայն յստակ է, որ այս անգամ գործեցին մեծ սխալ մը, որուն պատճառով Իսրայէլի ռազմավարական դաշնակիցին՝ Ազրայէճանի հետ Իրանի սահմանը երկարեցաւ, նախապէս հայկական վերահսկողութեան տակ եղող՝ 130 քիլոմետրով: Արդէն կը խօսուի Վարանդայի (Ֆիզուլի) մէջ նորակառույց ազրայէճանական օդակայանին իսրայէլեան կողմին տրամադրման մասին: Իրանցիները, այս բոլորի լոյսին տակ, կը հաւատան, որ Ազրայէճան Իրանի դէմ սաղրանք կատարելու համար իսրայէլեան հարթակի վերածուած է:

Այսօր նաեւ կը խօսուի «Զանգեզուրի միջանցք»-ի մը մասին, որ Իրանի շրջանային մրցակից Թուրքիան պիտի կապէ քարիւղով հարուստ Կասպից ծովուն եւ աշխարհաքաղաքական փոփոխութիւններ յառաջացնէ: Բան մը, որուն բռնու կերպով կ'ընդգրկմանայ

Սիւսէր կը հոգանաւորեն Ս. եւ Ս. Զաքարէ եւ Սիւսիւն Կարապետեան



 ՌՕՄ-ի Մոնթրեալի
«Սօսե» մասնաճիւղի վարչութիւնը
կը շնորհաւորէ ձեր Նոր Տարին եւ
Սուրբ Ծնունդը, մաղթելով որ 2022-ի
բոլոր օրերը ըլլան բարեբեր, շէն
ու պայծառ, առողջութեամբ եւ
արեւշատութեամբ լի, երջանկութեամբ
եւ բերկրութեամբ առլցուն:



Թեհրանը:

Իրանցի զինուորական պաշտոնատարներ յայտարարեցին, որ իրենց երկիրը միջազգային պաշտոնական սահմաններու որևէ փոփոխութիւն պիտի չհանդուրժէ: Յեղափոխութեան պահակագունդի հրամանատար զօրավար Մոհամետ Փաքիուր յայտարարեց. «Սահմաններու աշխարհաքաղաքականութեան մէջ փոփոխութիւն պիտի չհանդուրժենք: Այս հարցը Իրանի Իսլամական Հանրապետութեան համար կարմիր գիծ է»:

Այդ միջանցքը, իրականութիւն դառնալու պարագային, պիտի կտրէ Հայաստանի հետ Իրանի ճամբան եւ Իսլամական Հանրապետութեան դէպի Վրաստան, Սեւ ծով, Ռուսիա ու Եւրոպա ելքի ճամբան, եւ զայն կախալ դարձնէ թրքական ու ազրպէյճանական կողմի «բարիկամեցողութենէն»: Այդ մեծ վտանգի իրականութիւնը իրանցիներուն համար սկսած չօջափելի ու համոզիչ դառնալ, երբ ազրպէյճանցի զինուորներ 11 Սեպտեմբեր 2021-ին, Հայաստանի Հանրապետութեան Սիւնիքի մարզի Գորիս-Կապան ճամբուն վրայ սկսան իրանեան փոխադրականութեան համար դժուարութիւններ ստեղծել եւ մինչեւ իսկ 15 Սեպտեմբերին երկու փոխադրականութեան վարորդներ ձերբակալեցին ապա, 21 Հոկտեմբերին, ինչպէս Ազրպէյճանի Պետական մաքսային կոմիտէն հաղորդեց, «Մարդասիրական սկզբունքներով պայմանաւորուած» եւ իբրեւ «բարի կամքի դրսեւորում» ազատ արձակեցին իրանցի երկու վարորդները: Իրանի համար Թուրքիոյ եւ Ազրպէյճանի «բարի կամեցողութեան» պատանդը ըլլալը բնականաբար անընդունելի է, եւ իր բոլոր կարողութեամբ պիտի պայքարի այդ մղձաւանջի իրականութիւն դառնալը կանխարգելելու համար:

Այս բոլորը Թեհրանի տեսանկիւնէն կ'ուրուագեն երկիրը տնտեսական ու ապահովական պաշարման տակ առնելու յստակ ու արդէն իսկ չօջափելի վտանգը: Այդ իսկ պատճառով, Իրան վերջերս տեղի ունեցած Ազրպէյճան-Թուրքիա-Փաքիստան ռազմափորձերը նկատեց իր դէմ ուղղուած, ինչպէս նաեւ Կասպեան երկիրներու մէջ օտար ուժերու ռազմափորձերը արգելող հռչակագրի ոտնահարում մը: Իրանեան կողմը բնականաբար ձեռնածալ չէր կրնար մնալ այս բոլորին նկատմամբ:

Իրանի Յեղափոխութեան պահակագունդը, Հոկտեմբեր 1-ին, «Խալալի նուաճողներ» անունը կրող ռազմափորձեր կատարեց իր հիւսիս-արեւմտեան սահմանին՝ Ազրպէյճանի հետ սահմանին վրայ: Թուրքիա եւ Ազրպէյճան հակադարձեցին, Նախիջևանի մէջ ռազմափորձ մը կատարելով: Իրան 5 Հոկտեմբերին, Ազրպէյճանի զինուորական օդանաւերուն դէպի Նախիջևան թռիչքներու առջեւ փակեց իր օդային տարածքը, ինչպէս նաեւ թրքական բեռնակառքերու դիմաց իր սահմանը: Անգարա հակադարձեց իրանեան բեռնակառքերու դիմաց փակելով իր սահմանը:

Ականատես ենք խնդիրի մը, որ յառաջացած է Իրանի հարաւ-հիւսիս եւ Թուրքիոյ արեւմուտք-արեւելք ծրագրերուն միջեւ, որոնց խաչացեւման կէտը Զանգեզուրն է: Եթէ Թուրքիան Ազրպէյճանի Նախիջևանի ինքնավար մարզի անվտանգութեան երաշխաւորն է, ստեղծուած կացութիւնը Իրանի Իսլամական Հանրապետութիւնը կը վերածէ Հայաստանի Հանրապետութեան Սիւնիքի մարզի անվտանգութեան ոչ պաշտոնական երաշխաւորին, իրողութիւն մը, որմէ պէտք է լաւապէս օգտուին Հայաստանի իշխանութիւնները: Խնդիր-

ընդունելի չըլլալ եւ երկու կողմերուն միջեւ մոտիւս վիճակի մը յառաջացումը բացառուած չէ:

Իրան-Ազրպէյճան յարաբերութիւններու ներկայ իրավիճակը, սակայն, երկարատեւ պիտի չըլլայ՝ նկատի ունենալով երկու երկիրներուն միջեւ գոյութիւն ունեցող տնտեսական մեծ կապերը: Իրանի համար Ազրպէյճանէն դէպի Ռուսիա ճամբան նոյնքան կարեւոր է, որքան Հայաստանէն դէպի Սեւ ծով ճամբան եւ Թեհրան ինչպէս հուզեր Թուրքիոյ «բարի կամեցողութեան» պատանդը ըլլալ՝ այնպէս ալ պիտի չուզէ Ռուսիոյ «բարի կամեցողութեան» պատանդը ըլլալ: Իսլամական Հանրապետութիւնը ամէն ջանք պիտի թափէ «Իր հակիրթները մէկ կողովի մէջ դնելու» անախորժ կացութենէն խուսափելու համար:

Այդ հրամայականը առաւել եւս կը շեշտուի նկատի ունենալով Իրանի մտավախութեան նկատմամբ Ռուսիոյ «գաղջ» վերաբերմունքը: Իրանի արտաքին գործոց նախարար Հոսէյն Ամիր Ապտոլլահեան 6 հոկտեմբերին, Մոսկուա հասնելէ ետք, լրագրողներուն ըսաւ. «Մենք կ'ակնկալենք, որ Ռուսիան պիտի արձագանգէ եւ զգայուն պիտի ըլլայ շրջանի երկիրներու սահմաններուն հաւանական փոփոխութեան նկատմամբ»: Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով Ապտոլլահեանի հետ հանդիպումէն ետք, ընդառաջելով լրագրողներու՝ Ազրպէյճանի, Թուրքիոյ եւ Փաքիստանի ազրպէյճանական տարածքին, ներառեալ Կասպից ծովուն մէջ վերջին ռազմափորձերը մեկնաբանելու խնդրանքին, նշեց. «Ռուսիան դէմ է զինուորական գործունէութեան յաւելման, ինչպէս նաեւ սազրիչ բնոյթի ռազմափորձերուն»: Անոր ոչ հասցեագրուած նշումը կը վերաբերի նաեւ Իրանի կատարած ռազմափորձերուն:

Հարցերը արդէն սկսած են դէպի Իրան-Ազրպէյճան լարուածութեան մեղմացում ուղղուել. Իրանի արտաքին գործոց նախարար Հոսէյն Ամիր Ապտոլլահեան, 27 Հոկտեմբերին, Թեհրանի մէջ Աֆղանիստանի դրացի երկիրներու հանդիպումի աւարտին, մամլոյ ասուլիսի ընթացքին յայտարարեց. «Մենք հաղորդակցութիւններ ունեցած ենք Ազրպէյճանի արտաքին գործոց նախարարին հետ, կը կարծեմ, մենք աւարտած ենք լարուածութեան հանրային փուլը: Կը կարծեմ, որ մեր ունեցած խնդիրները աստիճանաբար պիտի լուծուին»:

Անոր յայտարարութենէն կարելի է եզրակացնել, որ այդ լարուածութիւնը ամբողջութեամբ չէ չքացած: Ատիկա հետագային ալ ամբողջովին պիտի չի չքանայ՝ նկատի ունենալով իսրայէլեան եւ Իրանի մէջ ազրպէյճանական փոքրամասնութեան գործօնները: Երկու երկիրներուն միջեւ լարուածութեան մեղմացման ընթացքը եւս կրնայ անշուշտ լուրջ հարուած մը ստանալ, եթէ Հայաստանը, Ռուսիան եւ Ազրպէյճանը իրենց յառաջիկայ վեհաժողովի ընթացքին «Զանգեզուրի միջանցք»-ի շուրջ համաձայնութիւն մը գոյացնեն:

Մեզի կը մնայ սպասել ու տեսնել, թէ տարածաշրջանին մէջ կարեւորագոյններէն եղող իրանեան գործօնը ինչպիսի ազդեցութիւն պիտի մնայ Հայաստանի Հանրապետութեան եւ հայ ժողովուրդին համար այնքան վտանգաւոր «Զանգեզուրի» իմա փանթուրքիստական միջանցք» ստեղծելու թրքական երազանքի ճակատագրին վրայ:

ՎԱՀՐԱՄ ԷՍՄԻԵԱՆ

Այս էջը կը հովանաւորեն ՂԺ. Է. Կիլի. Կրպար Է. Զամիկ Մասնաձեւ

Pâtisserie
MAHROUSÉ
FONDÉE EN 1970



9705 Boulevard de l'Acadie, Montréal, QC H4N 2W2
Tél: 514.279.1629 • info@mahrouse.ca • www.mahrouse.ca



Ghadir

Meat & Restaurant

Մեր ճաշարանն ներս կը սպասարկուի միջին արեւելեան զանազան ճաշատեսակներ, օրինակ՝ մենէիշ, պանիրով պեթրէկ, հաւու եւ կովու միսով շաուրմա, հաւու եւ կովու միսով խորոված, մսաշոք, չի բօֆթէ, լման հաւու խորոված, սուճուխ եւ այլ տեսակի աղանդերներ:

Մեր յարգարժան յաճախորդներուն կը յայտնենք, որ մօտ ատենէն բացումը պիտի կատարենք մեր նոր մասնաճիւղին, հետեւեալ հասցով՝
**London, Ontario @ 769 Southdale Road East
 (519) 668-1800**

ՀԱՍՏԷ՝
**1848 Lawrence Avenue East
 Scarborough, Ontario M1R 2Y4**

ՀԵՌԱԶԱՅՆ՝
(416) 750-7404 կամ (416) 750-7400



**Fresh, fried and charcoal
 grilled fish – Dine in or Take out**

GRANITE PRESTIGE MB

COMPTOIRS DE CUISINES ET SALLES DE BAIN
KITCHEN & BATHROOM COUNTERS

Spécialiste Comptoirs
Counter Specialists
Granite ~ Quartz
Marble ~ Marbre

Service
Clé en main
We do it all!

Prise de mesures
Fabrication
Livraison et Installation rapide
Measurements taken
Manufacturing
Delivery and Quick Installation

**GRATUIT
FREE***

Évier de cuisine / Kitchen Sink

Valeur de \$350
Value of
Commande min. / Min. order \$2500.00

Achetez au Prix du Fabricant!
Buy direct from the Manufacturer!

514.331.8337

www.graniteprestige.com

7111 ROUTE TRANSCANADIENNE
VILLE ST-LAURENT, QC H4T 1A2

VOISIN DE RONA et GUZZO • NEXT TO RONA HARDWARE & GUZZO

**ESTIMATION
GRATUITE
FREE ESTIMATE**

Մեծ հաճությամբ կը սպասարկենք Մեծն Մոնթրեալի Հայ գաղութը

Գանատայի Հայ Դատի լանձնախումբը պիտի շարունակէ իր հայրենասիրական առաքելութիւնը պաշտպանելով Հայաստանի, Արցախի եւ համայն հայութեան իրաւունքները

Հարցազրոյց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գանատայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Մհեր Գարազաշեանին հետ

«Հորիզոն».- Սեպտեմբերին կայացաւ ՀՅԴ Գանատայի 49-րդ Շրջանային ժողովը: Այս ժողովի լոյսին տակ, Ի՞նչ կարճաժամկէտ եւ երկարաժամկէտ ծրագիրներ մշակած է կառոյցը յառաջիկայ տարիներուն համար:

Մ.Գ.- Նախ եւ առաջ յայտնեմ, որ համաճարակի պարտադրած պայմաններուն բերումով, Շրջանային ժողովը քիչ մը յապաղումով կայացաւ: Ընդհանրապէս տեղի կ'ունենար Յուլիսի սկիզբը, սակայն այդ օրերուն այլընտրանք չունէինք, ուստի սպասեցինք, որ պետական սահմանափակումները մեղմանան, որպէսզի կարողանանք ի մի բերել աւելի քան հարիւր հոգի, եւ ժողովը կատարել առկայ ձեւով, եւ ո՛չ առցանց:

Ինչպէս իւրաքանչիւր Շրջանային ժողով, որ գերագոյն ժողովն է Գանատայի շրջանի կազմակերպութեան, այս ժողովին եւս քննարկուեցան անցնող երկու տարիներու աշխատանքները, քննարկուեցան Հայ Դատի, շրջանի կազմակերպական, քարոզչական, եւ համագործակցային հարցեր եւ առնուեցան համապատասխան որոշումներ: Քննարկուեցան նաեւ յառաջիկայ երկու տարիներու ռազմավարական ու մարտավարական ծրագիրները: Ժողովը հանգամանօրէն անդրադարձաւ Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառացած ներքին ու արտաքին մարտահրաւէրներուն՝ առաջնահերթութիւն նկատելով անվտանգութեան ու հակահայաթափման միասնական համակարգի ամրապնդումը:

Կազմակերպական առումով, արծարծուեցան մեր երկտասարդութեան գաղափարական դաստիարակութիւնը, անոնց ներդրաւունքը Հայ Դատի գործունէութեան եւ ազգային կեանքին մէջ, ինչպէս նաեւ կառոյցը մշտանորոգ վիճակի մէջ պահելն ու թարմացնելը: Ի վերջոյ, աւելի քան հազար անդամ ունեցող կազմակերպութիւն մը, որ կը տանի բազմաճիւղ եւ բազմաբովանդակ աշխատանք, ընդմիջտ կարիքն ունի յարատեւ վերանորոգման եւ ճիգերու ամրապնդման:

Շրջանային ժողովը, չեչտը դնելով Հայ Դատի աշխատանքներուն վրայ, վերահաստատեց իր յանձնառութիւնները հայրենիքի հզօրացման եւ հայութեան պատմական թէ՛ արդի իրաւունքներու վերականգնման գծով, ողջ կարողականութեամբ եւ ներուժով շարունակելու գործօն մէկ մասնիկը ըլլալ Հայաստանի ու Արցախի համար մղուող ազատագրական յարատեւ պայքարին, միջազգային, պետական եւ մարդկային իրաւանց տարբերատեսներու մէջ շարունակելու արդէն իսկ սկսած՝ Արցախի ինքնորոշման իրաւունքի ճանաչման, սահմաններու անվտանգութեան ու հայ ռազմագերիներու վերադարձի աշխատանքները: Հակառակ Արցախեան աղէտալի պատերազմին ու անոր յաջորդող ՀՀ իշխանութեանց որդեգրած անընդունելի քաղաքականութեանց, ժողովը վերահաստատեց Հայ Դատի աշխատանքներուն առաւել զարկ տալու հրամայականը, միեւնոյն ատեն չեչտակի կերպով ընդգծելով կարգ մը ոլորտներու մէջ աւելի մեծ ծաւալ պահանջող աշխա-



տանքներու ընդգրկման անհրաժեշտութիւնը:

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէն, Գանատայի տարածքին գործող իր բոլոր կառոյցներով, իր ողջ կարողականութեամբ պիտի շարունակէ Հայ Դատի աշխատանքները՝ նոյն սլացքով ու եռանդով, յանուն Արցախի, Հայաստանի ու Գանատայի մեր ժողովուրդին:

«Հորիզոն».- Հակառակ որ 2020 տարին անբարենպաստ տարի մըն էր համայն հայութեան համար, բայց Գանատայի հայ դատի գրասենեակը ունեցաւ բազմաթիւ յաջողութիւններ: Կարելի է այդ մասին տեղեկութիւններ տալ ընթերցողներուն:

Մ.Գ.- ՀՅԴ Գանատայի Հայ Դատի Շրջանային յանձնախումբը, Օթթաուայի գրասենեակով, տեղական յանձնախումբերով եւ կամաւորներու ու համակիրներու ամբողջ փառանքով, իրենց կարելին ու անկարելին ըրին, Գանատայի Դաշնակցային թէ՛ նահանգային պետական տարբեր օղակներու մօտ բարձրացնելով բողոքի ձայն՝ իրազեկ պահելու համար զանոնք գետնի վրայ տիրող իրադարձութիւններուն: Այստեղ, փակագիծերը բանալով կ'ուզեմ նշել, որ Գանատայի ազերիական համայնքը եւս բանեցուց իր լուսնիստական գոր-

Միշտ էք կը հովանաւորեն Սեւան, Նաքախի եւ Արմա Դարամայուլեան



VIVIDLY BRILLIANT

GIA Five-stone Diamond Anniversary Rings



LUGARO

PARK ROYAL SOUTH METROPOLIS AT METROTOWN DOWNTOWN VICTORIA
LUGARO.COM

ծունելութիւնը: Սակայն, ի հեճուկս հակագործողութիւններուն, Հայ Դատի յանձնախումբը կարողացաւ ճշուամբ բանեցնել պետական նախարարներու, Գանատայի դաշնակցային խորհրդարանի անդամներու, խորհրդարանական կուսակցութիւններու եւ խմբակցութիւններու վրայ, նոյնիսկ Արտգործ նախարարութեան, որոնք հանդէս եկան բռնութիւնները դադրեցնելու եւ խաղաղութեան կոչերով, ինչպէս նաեւ կասեցուցին գանատական զէնքի եւ անօդաչու սարքի տեսախցիկներու վաճառքը Թուրքիոյ:

Հայ դատը ցայսօր կ'աշխատի գանատական ու միջազգային կառույցներու հետ, լուծելու համար Հայ ռազմագերիներու հարցը, մարդկային իրաւանց խնդիրներն ու պահպանելու հայկական մշակութային կոթողները, որոնք կը գտնուին Արցախի բռնազրաւուած շրջաններուն մէջ: Միշտ պատնէշի վրայ մնացինք, հակառակ յուսախաբութեանց ու հիասթափութեանց:

Ներգանատական իմաստով, վերջին շրջանին մեր ուժերը կեդրոնացուցինք նաեւ Գանատայի դաշնակցային եւ նահանգային ու քաղաքապետական ընտրութիւններուն վրայ, արձանագրելով նկատառելի ձեռքբերումներ: Այստեղ նշենք, որ Գանատայի խորհրդարանական ընտրութիւններուն, Հայ դատի յանձնախումբի զօրակցած թեկնածուներուն 84 տոկոսը յաղթանակ ապահովեց: Իսկ Մոնթրէալի եւ Լաւալի քաղաքապետական ընտրութիւններուն չորս հայազգի թեկնածուներ յաղթանակ արձանագրեցին:

2021 Նոյեմբեր 15-ի դէպքերուն գծով, յստակ ուղերձ եւ նամակ յղեցինք Գանատայի Արտգործ նախարար Մելանի ժոլին, որ իր նախորդներէն քայլ մը առաջ գնաց ու յարաբերաբար աւելի հայամէտ յայտարարութիւն մը ըրաւ: Ասկէ անկախ կը մշակենք ուրիշ ծրագիրներ, փոխելու համար Գանատայի բռնած լուռ եւ անտարբեր քաղաքական-դիւանագիտական դիրքորոշումները: Բնականաբար գոհ չենք քաղաքական մեղկ յայտարարութիւններէն, բայց մեր կողմէ նորանոր ճշուումներ պիտի բանեցուին, որպէսզի յայտարարութեանց մէջ յստակօրէն ընդգծուի ողջ ճշմարտութիւնը:

Նշենք նաեւ, որ Մոնթրէալի Հայկական Համաշխարհային Աջակցութեան Կեդրոն (ՄՀՀԱԿ-CAMAM) բարեփոխական կազմակերպութիւնը, 2021 թուի Փետրուարի 1-ին, Օթթաւայի քաղաքակեդրոնին, ՀՀ դեսպանատան մերձակայութեամբ գնեց եռալարկ շէնք մը, որ շուտով կը դառնայ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի նստավայրն ու աշխատանքային-գործունէական կայքը: Այս իմաստով նուիրահաւաք մը կ'ապագաւ, ապահովելով 700 հազար տոլար: Այս նոր կեդրոնատեղիէն Գանատայի Հայ Դատի յանձնախումբը պիտի շարունակէ իր հայրենանուէր առաքելութիւնը, պաշտպանելով Հայաստանի, Արցախի եւ համայն հայութեան իրաւունքները՝ գանատական քաղաքական բեմին վրայ:

«Հորիզոն».- Հայաստան-Ատրպէյճան պատերազմը տակաւին կը շարունակուի, եւ իւրաքանչիւր օր ակնատես կ'ըլլանք խայտառակ գիշումներու ու պարտութեանց: Ի՞նչ է ձեր դիրքորոշումը ի տես այս բոլորին, եւ ի վերջոյ, ինչ կոչ կ'ուղղէ վերջին ամսուան ընթացքին աշխարհով մէկ բողոքի ցոյցեր եւ հաւաքներ իրականացնող հայ երիտասարդութեան:

Մ.Գ.- Պատերազմէն տարի մը անցած է, բայց ժգեալատաբար ներկայ վարչակարգը կը շարունակէ զիջողական քաղաքականութիւնը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ՝ սպառնալիք ու աղէ՛տ Հայաստանի ու Արցախի ազգային անվտանգութեան:

Ձենք հանդուրժե՞ր Հայաստանի ներկայ իշխանութեանց ապաշնորհ, ապագային ու հայրենաճախ քաղաքականութիւնն ու ամէն գնով աթոռին կառչած մնալու բռնազբօսիկ ճիգերը: Պարտուած իշխանութիւնը իրաւունքը չունի մնալու երկրի դեկին՝ ի հեճուկս հայրենիքին: Կը դատապարտենք Ատրպէյճանի եւ Թուրքիոյ հետ Հայաստանի իշխանութիւններուն բացայայտ եւ քուլիսային պայմանաւորուածութիւնները: Այս իշխանութիւնը վտանգ է Հայաստանին, Արցախին եւ ողջ հայութեան: Իսկ նստիլ եւ անտարբերութեամբ դիտել այս բոլորը, կը նշանակէ, որ տակաւին չենք հասած քաղաքական այն հասունութեան, որ դարեւ շարունակ արեամբ շահած ենք: Ուստի, կը զօրակցինք եւ կը միանանք Հայաստանի ու Սփիւռքի դիմադրութեան շարժումին, Հայաստանի մեր Կառույցին ու ազգային մտածելակերպ ունեցող իւրաքանչիւր հայրենակիցի, ազգային բարձր գիտակցութեամբ համախմբուելու եւ բռնեցք դառնալու՝ ընդդէմ արտաքին եւ ներքին թշնամիներուն: Եթէ պայքարը հատու պիտի ըլլայ յանուն հայրենիքին, թո՛ղ ըլլայ այդպէս: Մենք տրամադրուած ենք պայքարի եւ ամէն ինչ պիտի կատարենք զօրավիգ ըլլալու հայրենիքի փրկութեան գործին:

«Հորիզոն».- Այսօր ի՞նչ պատկեր կը պարզէ Գանատահայ գաղութն ու ի՞նչ մարտահրաւերներ ունի:

Գանատահայ գաղութը երիտասարդ, գործունէայ, հայաշունչ եւ մեծ մասամբ՝ հայախօս գաղութ մըն է, որ կազմուած է յունահայերէ, եգիպտահայերէ, պոլսահայերէ, լիբանանահայերէ, սուրիահայերէ, իրաքահայերէ, պարսկահայերէ, հայաստանցիներէ եւ այլ գաղութներէ եկած հայորդիներէ: Այս ընդհանուր խճանկարին մէջ, իւրաքանչիւր անգամ որ հայ գաղթականներու ալիք մը եկած է այստեղ, գաղութը կըրցած է ինքզինք վերանորոգել հայօրէն: Այս իմաստով, ըլլա՛ն Մոնթրէալի կամ Թորոնթոյի մեծ գաղութները եւ կամ հարաւային Օնթարիոյի հայահոծ քաղաքները, ինչպէս նաեւ Վանգուվըրը, ունին կազմակերպ գաղութ ըլլալու բոլոր նախատուեալները՝ եկեղեցի եւ Հայ կեդրոններ: Բայց Մոնթրէալի եւ Թորոնթոյի առաւելութիւնը այն է, որ ունինք ամէնօրեայ հայկական վարժարաններ:

Գաղութն միշտ ձեռք երկարած է օժանդակութեան կարիք ունեցող այլ գաղութներուն, ինչպէս՝ Սուրիոյ, Լիբանանին, Հայաստանին ու Արցախին, եւ տակաւին Նոյեմբերին, մասնակցութեամբ գանատահայ միութիւններու եւ կազմակերպութիւններու, զօրաշարժի ենթարկեցինք մեր ոյժերը, անգամ մը եւս հասանք լիբանանահայութեան:

Սակայն, հարկ է միշտ զգօն ըլլալ, պահպանելու համար նոր սերունդներուն ազգային ինքնութեան գիտակցութիւնը, լեզուն եւ մշակոյթը, որոնք մեր գոյապայքարի սիւներն են:

Այս օրերուն, գաղութի մը հայերի դիմագիծը կարեւոր է, սակայն աւելի կարեւորը՝ հայերի, յանձնառու եւ պատասխանատուութեան գիտակից դիմագիծն է: Այս իմաստով, գանատահայ գաղութը յանձնառու գաղութ է, մտահոգ հայրենիքով, Արցախով եւ հայ ժողովուրդի ապագայով: Միշտ պատնէշի վրայ եղած ենք եւ պիտի մնանք յանձնառու՝ մեր ուխտին, հայ դատին, Հայաստանի ու Արցախի անվտանգութեան ու ամբողջականութեան եւ հայ ժողովուրդի բոլոր յոյսերուն, իղձերուն ու տենչերուն:

Հարցազրոյցը վարեց՝ Քրիստափոր Միքայէլեան

Այս էջը կը հովանաւորեն Մ. եւ Մ. Վարդգէս Մնեմնեսեան եւ Վնոյշ Վեմնեսեան

ՅԱՆՈՒՆ ՄԵՐ ԴԱՏԻՆ, ՅԱՆՈՒՆ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ



ԿԱՌՈՅՑ

Գանատայի Հայ Դատի Շրջանային յանձնախումբը աշխատանք կը ծաւալէ համագանատական առումով, առաւելաբար մայրաքաղաք Օթթաուայի մէջ, դաշնակցային օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւններու մակարդակի վրայ: Իրեն զուգահեռ կը գործեն Հայ Դատի տեղական յանձնախումբերը, նահանգային թէ քաղաքապետական օղակներու մէջ՝ Մոնթրէալ, Լաւալ, Թորոնթօ, Վանկուվըր, Գեմպրիճ, Համիլթըն, Սենթ Գաթրիսկ եւ Ուիննիպ քաղաքներու Հայ կեդրոններէն:

ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ

Մեր գործունեութեան յենարանն ու ուժի աղբիւրը առաջին հերթին մեր ժողովուրդն է: Անո՛ր է որ կը դիմենք ամենէն առաջ, որեւէ արշաւի համընդհանուր մասնակցութեան եւ ժողովրդական ալիքի ծաւալ տալու համար:

ԳՈՐԾԱԴԱՇՏ ԵՒ ՆՊԱՏԱԿԱԿԵՏԵՐ

Հայկական Ցեղասպանութեան ճանաչում, Հայաստանի Հանրապետութեան հզօրացման ուղղուած քայլեր, Արցախի ինքնորոշման իրաւունքի ամրագրում, Սփիւռքի զաղթօճախներու յանձանձում, ասոնք են գլխաւոր քնազաւառները մեր գործունեութեան:



Թիկունք կը կանգնիմ Հայ Դատին
I support the Armenian Cause
Je soutiens la Cause Arménienne

- ☐ Այո, կը փափաքիմ զօրակցիլ Հայ Դատի աշխատանքներուն: Ներկիակ կը գտնեք նուիրատուութիւն, յղուած **A.N.C.**-ի:
- ☐ Yes, I want to support the ANCC and the Armenian Cause. Please find my donation enclosed, payable to the **A.N.C.**
- ☐ Oui, je desire appuyer le CNAC et la Cause Arménienne. Veuillez trouver ma donation ci-jointe, à l'ordre de **A.N.C.**
- ☐ 20\$ ☐ 50\$ ☐ 100\$ ☐ 200\$ ☐ Այլ/Autre/Other _____

Name / Nom _____

Address / Adresse _____

Tel / Tél: _____

E-mail / courriel: _____

- ☐ Կը փափաքիմ նաեւ մաս կազմել «Հայ Դատի Բարեկամներ»-ու շրջանակին: Ուղարկեցէք ձեր տեղեկատուութիւնը վերոյիշեալ հասցէներուն:
- ☐ I would also like to be a member of the "Friends of Hay Tad" circle. Send your information to the above-mentioned addresses.
- ☐ J'aimerais aussi faire partie du cercle «Amis de Hay Tad». Envoyez votre information aux adresses mentionnées ci-dessus.

Մեր կապի տուեալները

Մայր գրասենեակ, Օթթաուա

130, Albert Street, # 1007,

Ottawa, Ontario K1P 5G4

Tel.: (613) 235-2622 • Fax: (613) 238-2622

E-mail: national.office@anc-canada.com

Website: www.anccanada.org

Մոնթրէալի գրասենեակ

3401, Olivar Asselin,

Montreal, Quebec H4J 1L5

Tel.: (514) 334-1299 • Fax: (514) 334-6853

Թորոնթօյի գրասենեակ

45 Hallcrown Place,

Willowdale, Ontario M2J 4Y4

Tel.: (416) 491-2900 • Fax: (416) 491-2211

Ապրի՛լ յոյսով, յոյսո՛վ ապրիլ



Բնախօսությունն ու բժշկությանն նույնիսկ մրցանակակիր Արտեմ Փաթախություն

Տանձենին ծաղկեր է...

Այս աւետարներ լուրը կը կարգանք «ԵՐԿԻՐ»-ի կայքէջին վրայ՝ 9 հոկտեմբերին. «Արագածոտնի մարզի Աշնակ գիւղում տանձենին ծաղկել է: Լուսանկարն ուղարկել է Գէորգ Սարուխանեանը: Այս մասին իր ֆեյսբուքեան էջում յայտնել է «Հիդրոօգերեւութաբանութեան և մոնիթորինգի կենտրոն»-ի տնօրէնի տեղակալ Գագիկ Սուրէնեանը»:

Տանձենին ծաղկեր է աշնան:

Գեղեցիկ է լուսանկարը: Լոյսին հակառակ քաշուած գրեթէ վերացական արուեստի գլուխ գործոց մը՝ իրարու հիւսուող ճիւղերու եւ ճիւղիկներու մուգ գոյնի ցանցով մը, նոյնպէս գոց կանաչ շնորհալի ու տանձի իսկ նմանող տերեւներով ու հոյակապ սպիտակ փոքր ու նուազ փոքր ծաղիկներով, որոնք իրենց վրայ կը կեդրոնացնեն ուշադրութիւնդ:

Ուշագրաւ է, կասկած չկայ: Բայց ուշագրաւումը պարզ տեսողականէն անդին կ'անցնի:

Ուշագրաւ է՝ որպէս հակադրութիւն այն տխուր իրականութեան, որ կ'ապրի մեր երկիրը, կ'ապրինք եւ մենք:

Ծաղկեր է տանձենին:

Աշնակ գիւղի՝ տանձենին: Սասունցիներո՛ւ գիւղի տանձենին:

Խորհրդածութիւնները ընթերցողին կը ձգեն:

*

Մալխասը՝ ախոյեան:

Այս լուրն ալ «ԵՐԿԻՐ»-ի կայքէջէն կ'առնեմ: 8 հոկտեմբերի լուրերէն. «Մալխաս Ամոյեանը դարձաւ Աշխարհի չեմպիոն»: Ու կը կարգանք. «Օսլոյում ընթացող յունահռոմէական ըմբշամարտի աշխարհի առաջնութիւնում Հայաստանը ներկայացնող 72 կգ քաշային Մալխաս Ամոյեանը

դարձաւ չեմպիոն: Հայ ըմբշը եզրափակիչ գօտեմարտում 3-1 հաշուով պարտութեան մատնեց ռուսաստանցի Սերգէյ Կուտուզովին»:

Կը յիշէ՞ք «Արարատ»-ի ոտնագնդակի մրցոյթին թնթացող «խփի՛ր»-ները...

Խորհրդածութիւնները ընթերցողին կը ձգեն:

*

Թինան եւ Սիմոնը՝ 2022-ի Ողիմպիականներուն անցազրի ստացան:

